AZG NEW PDF.qxd 07/06/2010 22:39 Page 1

Ազգ
Azg
8 ՅՈՒՆԻՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 104 (4484)
ISSN: 1829-1651

# Թուրքիան ու Ադրբեջանը վերջապես ստորագրեցին «գազի պայմանագիրը»

Երկար ժամանակ արդեն ձգձգվող թուրք-ադրբեջանական «գազային բանակցությունները» ավարտվեցին։ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի Թուրքիա կատարած այցի հիմնական նպատակը հենց այդ պայմանագրի կնքումն էր, որով Ադրբեջանը գազ կարտահանի ոչ միայն Թուրքիա, այլեւ դեպի Եվրոպա։ Պայմանագիրը ստորագրել են երկու երկրների էներգետիկայի եւ արդյունաբերության նախարարները Թուրքիայից՝ Թաներ Յըլդըզը, Ադրբեջանից՝ Նաթիկ Ալիեւը, վերջինս ստորագրումն անվանել է «պատմական»։ Պատմականից բացի թուրք-ադրբեջանական գազային համաձայնությունը, մանավանդ ադրբեջանական գազի արտահանումը Եվրոպա, կարող է առաջ բերել Ռուսաստանի դժգոհությունը։ Ինչպես նկատել է այս կապակցությամբ Ֆրանսպրեսը՝ «տարածաշրջանում կթուլանա կախվածությունը ռուսական գազից»։ Ավելորդ չենք համարում նաեւ հիշեցնել, որ «գազային բանակցությունները» ձգձգվում էին հիմնականում հայ-թուրքական գործընթացների պատճառով, իսկ դրանց սառեցումը, փաստորեն, բերեց պայմանագրի կնքմանը, որն էլ իր հերթին վկայում է, որ մոտ ապագայում Անկարան չի էլ պատրաստվում «մերձենալ Հայաստանի հետ»։

Հ. Ա.

# Նախագահի թեկնածուի անձեռնմխելիությունը մնաց



Անցած քառօրյայում կառավարության նախաձեռնությամբ էր բերվել եւ ընդունվել էր ընտրական օրենսգրքի այն փոփոխությունների նախագիծը, որով առաջարկվում էր ընտրությունների ժամանակ առաջադրված բոլոր թեկնածուների՝ համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, պատգամավորի, նախագահի թեկնածուների անձեռնմխելիությունը օրենքորեն հանել։ Հայաստանի նախագահը այս օրենքը չէր ստորագրել եւ հետ էր վերադարձրել ԱԺ՝ նրա վերապահումները վերաբերում են նախագահի թեկնածուների անձեռնմխելիությանը, ավելի ստույգ՝ նախագահը դեմ էր նախագահի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելուն եւ առաջարկներ էր ներկայացրել այս առթիվ։ Երեկ սկսված քառօրյայում ԱԺ-ն քննարկեց նախագիծը՝ նախագահի առաջարկներով, որը ներկայացրեց Ազգային ժողովում նախագահի ներկայացուցիչ Գառնիկ Իսագուլյանը։ Նախագծի առիթով հնչած առաջարկներից ամենաճիշտն այս պահին համարվեց Ռաֆիկ Պետրոսյանի առաջարկը՝ նախագահի առաջարկություններով ընդունել օրենքը. «Եթե հետագայում օրենսդիրը հարմար կգտնի այլ առաջարկ կամ նախագիծ բերել, կարող է հանգիստ բերել ԱԺ եւ ընդունել», նկատեց Գ. Իսագուլյանը։ Ի դեպ, օրենքի ընդդիմախոսներին նա հիշեցրեց պատգամավորական այն նախընտրական խոստումները, թե գանք խորհրդարան, պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելու օրինագիծ ենք առաջարկելու. «Ուրեմն եւ այդ պահն էլ կա», ակնարկեց նա։

Չնայած տեսակետներ են հնչում, որ մեր երկիրը դեռեւս պատրաստ չէ անձեռնմխելիությունը հանելու, դա ընտրությունների ժամանակ կարող է վերածվել թեկնածուի հանդեպ ոտնձգությունների եւ այլն, սակայն այս օրենքն արդեն ընդունվել էր նախորդ քառօրյայում եւ հազիվ թե նախագահի առաջարկներով օրինագիծը չքվեարկվի եւ չընդունվի։ **Մ. Խ.**

ԴԱՐՁՅԱԼ «ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ» ՇՈՒՐՋ

# Մամեդյարովի «ծուռ հայելին»

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա), Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ) եւ Իգոր Պոպովը (Ռուսաստան) Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ հունիսի 4-ին Վենետիկում հանդիպելուց հետո հանդես են եկել հայտարարությամբ՝ ընդամենը տեղեկացնելով, որ հանդիպել են Ադրբեջանի ԱԳ նախարարին, իսկ դրանից առաջ՝ մայիսի 12-ին էլ հանդիպել էին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանին։

Հետաքրքրական է, որ Մինսկի խմբի՝ առավելագույնս բան չասող ու հակիրճ հայտարարության կողքին Ադրբեջանի ԱԳ նախարարն այնպիսի մի բազմախոսություն է դրսեւորել, որ տարօրինակ է դիտվում վերջին ամիսների Մամեդյարովի կատարյալ լռության ֆոնին։

Քաղաքական բեմից ինչ-որ հետնախորշեր անցած Մամեդյարովը հունիսի 5-ին հայտարարել է, թե «չի կարելի հնարավորություն տալ նրանց, ովքեր Հարավային Կովկասում խաղաղություն ու կայունություն չեն ուզում, այլ ուզում են ձախողել բանակցությունները»։ Փոխանակ ինքն իրեն այդ ամենը ասելու ու տարածաշրջանում «օդ պղտորելու» հայտարարություններից հրաժարվելու՝ Մամեդյարովը խոսել է հարեւանների հետ «ընդհանուր լեզու գտնելու» անհրաժեշտությունից, թերեւս մոռանալով, որ Ադրբեջանն այդ առնչությամբ միայն հոխորտալով է հանդես գալիս, խոչընդոտելով նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավումը։

Ադրբեջանական «Ազերիպրես» գործակալության տեղեկացմամբ, Մամեդյարովն այս անգամ էլ բարձրաձայնել է այն թեզը, թե հայկական կողմը «դեռեւս չի ընդունել նորացված մադրիդյան սկզբունքները», երբ Ադրբեջանն իբր պատրաստ է շարունակելու բանակցություններն այս հունով։ «Չնայած Ադրբեջանը դեռեւս որոշ կետերի առնչությամբ աշխատելու անհրաժեշտություն է տեսնում»։ «Գնդակը Հայաստանի դաշտում է», ասել է Ադրբեջանի արտաքին գերատեսչության ղեկավարը եւ ավելացրել. «Հայաստանը պետք է որոշի, թե ինչ անել հետո»։

Բանակցությունների շարունակման հանդիպումների առումով էլ Մամեդյարովը հայտարարել է, թե Ադրբեջանը պատրաստ է դրանք շարունակել, եթե «հայկական կողմը անկեղծ ցանկություն ունի առաջընթացի հասնելու եւ բոլոր միջոցներով չի ձգտում ժամանակ ձգել»։ Ըստ Մամեդյարովի՝ Աթենքում անցկացված հանդիպումներն անարդյունք են եղել։

Մամեդյարովն առանձնակի նոր բան չի հաղորդել, ընդ որում, ասածն էլ չի ներկայացել նոր տեսանկյունից։ Իսկ այն, թե Հայաստանն է տվյալ պահին ձգձգում գործընթացը, արդեն մի քանի ամիս ադրբեջանական տարբեր չինովնիկների խոսք-զրույցի թեմա է, որին Հայաստանի ԱԳՆ-ն արձագանքել է։ Սակայն հետաքրքրական է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տեղեկացմամբ՝ վերցված «ընդմիջումը», ըստ Ադրբեջանի ԱԳ նախարարի, «երկար է շարունակվում»։

Մամեդյարովին առատորեն մեջբերող կայքէջերի բազմաթիվ հրապարակումներից կարելի է ենթադրել, թե շատ է խոսել կամ շատ բան է ասել հարեւան երկրի գլխավոր դիվանագետը, սակայն ասվածում ոչ մի հստակ բան չկա։ Անուղղակիորեն դա է հաստատել նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Իգոր Պոպովը։ Նա հայտարարել է, թե Ադրբեջանի ԱԳ նախարարի հետ Վենետիկում կայացած հանդիպումը օգտակար էր։ «Դա սովորական աշխատանքային հանդիպում էր», հավաստիացրել է Պոպովը, ավելացնելով, թե ինչ-որ բեկումնային պայմանավորվածություն ձեռք չի բերվել։

Ըստ Պոպովի՝ համանախագահները ծրագրում են հերթական այցելությունը տարածաշրջան, որը, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա հունիսի վերջին-հուլիսի սկզբին։ Իսկ թե կայցելե՞ն Լեռնային Ղարաբաղ, Պոպովը արձագանքել է, թե այցելության ծրագիրը դեռեւս հստակեցված չէ։ Պոպովը տեղեկացրել է. «ԼՂ այցելություն ծրագրվում է, սակայն հերթական տարածաշրջանային այցելությա՞նը դա կլինի, թե՞ հաջորդ անգամ, դեռեւս հայտնի չէ»։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Մարտի 1-2-ի զեկույցի առաջարկների մշտադիտարկման զեկույց

**Ազգային ժողովի այս քառօրյայում կներկայացվի մարտի 1-2-ի դեպքերը քննող ժամանակավոր հանձնաժողովի ավարտական զեկույցի առաջարկների իրականացումը վերահսկող գլխադասային հանձնաժողովի մշտադիտարկման առաջին եզրակացությունը։ Այդ գլխադասային հանձնաժողովը պետաիրավական է, որի նախագահն է Դավիթ Հարությունյանը։ Այդ զեկույցն օրակարգ մտցնելու առաջարկն արել է Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, եւ քվեարկությամբ անցել է։ Զեկույցը Դ. Հարությունյանը կարող է ներկայացնել 40 րոպեում, սակայն հարակից զեկույցով հանդես գալու հնարավորություն չի տրվում։**

**Մ. Խ.**

# Խնդրանք Սարկոզիին՝ Ջավախքի առնչությամբ միջնորդելու Սաակաշվիլուն

2010 թ. հունիսի 7-8-ը Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու Ֆրանսիա կատարելիք պաշտոնական այցի կապակցությամբ Ֆրանսիայում գործող «Երկիր-Եվրոպա» կազմակերպությունը (www.yerkir.eu, կենտրոնակայանը Լիոն) նամակ է հղել երկրի նախագահ Նիկոլա Սարկոզիին, որտեղ ներկայացրել է Վրաստանի կառավարության կողմից ջավախահայության նկատմամբ իրականացվող խտրական քաղաքականության դրսեւորումների փաստերը։

Նամակում հատուկ անդրադարձ է արվել ջավախահայության իրավունքների համար պայքարող ջավախահայ գործիչ Վահագն Չախալյանի նկատմամբ վրացական իշխանությունների քաղաքական հաշվեհարդարի հանգամանքներին աղաղակող օրինախախտումներով ուղեկցվող նրա դատավարությանը եւ չինծու մեղադրանքերով 10 տարվա ազատազրկման դատապարտմանը։

«Երկիր-Եվրոպա» կազմակերպությունը, նշելով, որ ֆրանսահայությունը գնալով էլ ավելի է մտահոգվում Վրաստանի հայության վիճակով, խնդրել է նախագահ Սարկոզիին միջնորդել իր վրաց պաշտոնակցի առջեւ ջավախահայության իրավունքների ոտնահարման քաղաքականությունը դադարեցնելու եւ Վահագն Չախալյանին անհապաղ ազատ արձակելու ուղղությամբ։

Ա. Հ.

# Սուտլիկ ադրբեջանցիների «արկածները» ՄԱԿ-ում

Ադրբեջանական APA գործակալությունը տեղեկացրել էր, թե իբր ՄԱԿ-ում տեղի է ունեցել բախում Հայաստանի ու Ադրբեջանի պատվիրակությունների միջեւ, որի ընթացքում «Հայաստանի մշտական ներկայացուցիչը փորձել է ապակողմնորոշել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) նիստի մասնակիցներին», իսկ ադրբեջանցի դիվանագետները քննադատել են հայկական կողմի «ստախոսությունը»։

Թե ինչ է կատարվել ՄԱԿ-ում, ԱԳՆ տեղեկացնում է, որ հունիսի 1-4-ը Նյու Յորքում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր խորհրդի նիստի քննարկմանը մասնակցել են նաեւ երկու երկրների ներկայացուցիչները։ Հունիսի 3-ին Հայաստանի դեսպան Կարեն Նազարյանն իր ելույթում անդրադարձել է ինչպես Ադրբեջանին վերաբերող փաստաթղթին, այնպես էլ Ադրբեջանի դեսպանի ելույթում տեղ գտած անթույլատրելի ձեւակերպումներին ու վերջինիս մեղադրել քննարկումները շեղելու եւ քաղաքականացնելու փորձ կատարելու մեջ։ Հետագա քննարկումների ընթացքում՝ հունիսի 3-ի երկրորդ կեսի եւ 4-ի նիստերում Ադրբեջանի պատվիրակությանը մերժել են օգտվել պատասխանի իր իրավունքից։

Այստեղ են ասել՝ ստախոսն է ստի մեջ ուրիշներին մեղադրում։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ստամբուլում վերահրատարակվեց Թեոդիկի «Հուշարձան ապրիլի 11-ի (24-ի)» գիրքը

## *Դա առաջին անգամ եւ՝ 1919-ին հրատարակվել էր այնտեղ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

1915-ի ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը Կ. Պոլսում իթթիհադական իշխանությունները Վանի հայկական ընդվզումների պատճառաբանությամբ ձերբակալում են 235 հայ մտավորականի։ Դրան հետեւում է եւս 600 մտավորականի ձերբակալությունը։ Մայիսի 24-ին ձերբակալված հայերի թիվը քաղաքում հասնում է 2345-ի, որոնք, հատուկենտ բացառությամբ, սպանվում են աքսորի ճանապարհին։




Նույն թվի մայիսի 27-ին իթթիհադականներն ընդունում են «Պատերազմական իրավիճակում կառավարության ձեռնարկումներին հակադրվողների համար զինվորականության նախատեսած միջոցառումների ժամանակավոր օրենքը», որը պատմագրությանը հայտնի է «Տեղահանության օրենք» կրճատ տարբերակով։

Այսպիսով, պաշտոնապես սկսում է հայերի զանգվածային սպանություններով ուղեկցվող տեղահանությունը Օսմանյան կայսրության հայաբնակ բոլոր վայրերից, ներառյալ՝ Թրակիան։ Քանի որ 1914-ի օգոստոսի հրամանագրով նախ զորակոչի էին ենթարկվել 20-45 տարեկան հայ տղամարդիկ, ապա նաեւ թուրքական բանակի համար պարեն, ռազմամթերք կրելու նպատակով 15-20 եւ 45-60 տարեկանները, որոնք անխտիր սպանվեցին աշխատանքային գումարտակներում, ուստի տեղահանությունը տարածվեց երեխաների, անպաշտպան կանանց եւ 60-ից բարձր տարիքի տղամարդկանց վրա։

*Տես էջ 2*

AZG NEW PDF.qxd 07/06/2010 22:06 Page 1



# ԱՄՆ-ը բարելավում է հարաբերությունները Բաքվի հետ

## *Սակայն ընդգծում՝ «Ադրբեջանում կոռուպցիան համատարած է»*

Ամերիկա-ադրբեջանական հարաբերությունների վերջին ժամանակների լարվածությունը տեսանելի էր բոլորին: Նախ Վաշինգտոնը ամենեւին էլ չէր շտապում նոր դեսպան նշանակել «էներգետիկ ռեսուրսներով այդքան հարուստ» Ադրբեջանում, բացի այդ, Իլհամ Ալիեւը չհրավիրվեց վաշինգտոնյան միջուկային անվտանգության գագաթաժողովին, ԱՄՆ-ը շարունակ պնդում էր, որ հայ-թուրքական մերձեցումը պետք է լինի առանց նախապայմանների եւ այլն: Ադրբեջանում այս ամենը մեծ իրարանցում առաջացրեց. բոլոր կողմերից լսվում էին հակաամերիկյան հայտարարություններ, դրվեց նույնիսկ Մինսկի խմբում ԱՄՆ համանախագահության արդյունավետության հարցը, բոլորովին վերջերս Բաքվում Իսրայելի ու հայկական դրոշների հետ «Մահ Ամերիկային» գոչողները այրեցին նաեւ ամերիկյան դրոշը:

Բնականաբար Վաշինգտոնին շահեկան չէր լինի Ադրբեջանում տիրող հակաամերիկյան հիստերիայի շարունակությունը. շուտով ԱՄՆ-ը հայտարարեց Բաքվում իր նոր դեսպանի անունը եւ ակտիվացրեց երկխոսությունը՝ ադրբեջանական իշխանությունների հետ: Սակայն «չգիտես ինչու» նախագահ Օբաման «մոռացավ» մայիսի 28-ին Ադրբեջանի ազգային օրվա առիթով շնորհավորել Ալիեւին. Օբաման իր շնորհավորանքն ուղարկեց մի քանի օր ուշացումով:

Ինչեւէ, ամերիկա-ադրբեջանական հարաբերությունների լարվածության թոթափմանն էր թերեւս ուղղված Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսի այցելությունը Բաքու: Վերջինիս ադրբեջանական հանդիպումներին չենք անդրադառնա (դրանք արձանագրային բնույթ են կրել), պարզապես նշենք, որ Գեյթսը Ալիեւին փոխանցեց Բարաք Օբամայի նամակը եւ հավանական համարեց, որ առաջիկայում Բաքվում կլինի նաեւ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Մի փոքր ուշ հայտնի դարձավ Իլհամ Ալիեւին ուղղված Օբամայի նամակի բովանդակությունը, որտեղ ԱՄՆ նախագահը չի էլ թաքցնում, որ երկկողմ հարաբերություններում «առկա են լուրջ խնդիրներ»: Այսպես, նամակում նշված է. «ԱՄՆ-ը բարձր է գնահատում Ադրբեջանի դերը Աֆղանստանում խաղաղապահ ուժերի առաքելությունը կազմակերպելիս, մենք գնահատում ենք նաեւ Ադրբեջանի ջանքերը՝ միջազգային ու տարածաշրջանային անվտանգությանն ուղղված: Ես հույս ունեմ, որ մենք կկարողանանք խորացնել մեր հարաբերությունները առաջիկա ամիսների կամ տարիների ընթացքում, մանավանդ հաշվի առնելով, որ վերջին ժամանակներում դրանցում նկատվում են լուրջ խնդիրներ», ասված է Օբամայի նամակում:

Այնուհետեւ ԱՄՆ նախագահը կրկին բարձր է գնահատել Ադրբեջանի ջանքերն՝ ուղղված ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը, «որը ընթանում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի միջնորդությամբ», եւ շեշտել, որ «Հարավային Կովկասում խաղաղությունն ու կայունությունը ԱՄՆ-ի համար առաջնային կարեւորություն ունեն»: Այս կապակցությամբ հատկանշական է Օբամայի «հորդորը» Իլհամ Ալիեւին՝ «բոլոր դեպքերում ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի խաղաղ բանակցությունների ճանապարհով»:

Գեյթսի Բաքու այցելության, ԱՄՆ-Ադրբեջան «կարգավորվող հարաբերությունների» թեմայով բավական ուշագրավ հոդված է տպագրել հայտնի Washington Post-ը: Ամերիկյան պարբերականն ընդգծում է, որ «փոքրիկ, 8 միլիոնանոց Ադրբեջանը հետաքրքրական է երկու առումներով». «Նախ՝ այդ երկիրը հարուստ է նավթով, հետո, ինչը հատկապես այս օրերում ավելի կարեւոր է թվում, Ադրբեջանը կարեւոր աշխարհագրական դիրք ունի. դեպի Աֆղանստան տարանցման հնարավորություններ է ընձեռում: Այսօր Աֆղանստանում կան 140 հազար զինվորներ այլ երկրներից, եւ նրանցից շուրջ 100 հազարը այնտեղ են եկել Ադրբեջանի տարածքով», գրում է ամերիկյան թերթը: Մյուս կողմից էլ Washington Post-ը հիշեցնում է ԱՄՆ պետքարտուղարության զեկույցը, որը վերաբերում էր ԱՊՀ երկրներում կոռուպցիայի մակարդակին. «Ադրբեջանի իշխանությունը պաշտոնական դիրքերը չարաշահող պաշտոնյաներ ունեցող կառավարության համբավ ունի: Ադրբեջանի կառավարությունում համատարած կոռուպցիա է իշխում: Պենտագոնի ղեկավարը Բաքվում շեշտեց, որ ԱՄՆ-ի սերտ հարաբերությունները տարածաշրջանի որեւէ իշխանության հետ ամենեւին չեն նշանակում, որ ԱՄՆ-ը դադարել է աջակցել մարդու իրավունքների եւ ժողովրդավարության արժեքների զարգացմանը: Գեյթսը Բաքվում շեշտեց, որ մենք աշխատում ենք հավասարակշռել մեր շահերը», եզրափակում է ամերիկյան պարբերականը: Սրանով թերեւս Վաշինգտոնը, գնալով Բաքվի հետ «լուրջ խնդիրների» լուծմանը, այնուամենայնիվ, մասնանշում է այն լծակները, որոնց միջոցով անհրաժեշտության պարագայում կարող է պատժել հաճախ հոխորտացող Բաքվին:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ստամբուլում վերահրատարակվեց Թեոդիկի «Հուշարձան ապրիլի 11-ի (24-ի)» գիրքը

*1-ին էջից*

Հետեւաբար, արեւմտահայության բնաջնջման իրականացումը մարդասպանների համար առանձնակի դժվարություն չներկայացրեց: 1918-ի հոկտեմբերի 30-ին Մուդրոս նավահանգստում ստորագրվեց զինադադարի պայմանագիր, դրանով օսմանյան Թուրքիան հանձնվեց հաղթողների ողորմածությանը: Զինադադարի ստորագրումից երեք օր անց՝ նոյեմբերի 2-ին երկիրը լքեցին Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներ Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը: Այնուհետեւ Անտանտի զորքերը օկուպացրին Ստամբուլը:

Հակաիթթիհադական տրամադրություններն ու Անտանտի առջեւ արդարանալու հրամայականը ստիպեցին օսմանյան Մեջլիսին, որ 1918-ի դեկտեմբերի 21-ի որոշումով ստեղծի «պատերազմի եւ տեղահանության հանցագործությունների հետաքննության» հանձնաժողով: Մինչեւ 1919-ի հունվարի վերջը չարագործներից 112-ն արդեն ձերբակալված էին: Հանձնաժողովը նրանց հարուցեց «մեկ միլիոն հայի, 550 հազար հույնի սպանության, ինչպես նաեւ աշխատանքային գումարտակներում 250 հազար զորակոչիկի ոչնչացման» մեղադրանք: Դրա հիման վրա ձերբակալվածների գործը հանձնվեց ռազմական ատյան, իսկ 1919-ի փետրվարի 5-ին սկսվեց «պատերազմի եւ տեղահանության» հանցագործների դատավարությունը:

Այս ամենը հնարավորություն տվեց պոլսահայության բեկորներին ոգեկոչելու իր զոհերի հիշատակը: Որքան էլ կաթվածահար եւ արյունաքամ լինեին, Մեծ եղեռնից 4 տարի հետո՝ 1919-ին նրանք Ստամբուլում ստեղծեցին «Ապրիլի 11-ի սգո հանդեսի» հանձնախումբ, որն էլ նախաձեռնեց Թեոդորոս Լափչինճյանի՝ Թեոդիկի «Հուշարձան ապրիլի 11-ի» հրատարակումը: Նույնիսկ Ստամբուլի Թաքսիմ հրապարակի շրջակայքում կանգնեցվեց Մեծ եղեռնի առաջին հուշարձանը, որն այնուհետեւ ոչնչացրին մարդասպան ստահակները: Քանի որ ապրիլի 11-ը մեր տոմարով համապատասխանում է ապրիլի 24-ին, ուստի պետք է ասել, որ բացի հուշարձանի կառուցումից, առաջինը 1919-ին հենց Ստամբուլում է նշվել Մեծ եղեռնի զոհերի հիշատակը:

Այս տարվա ապրիլի 24-ի նախօրեին Ստամբուլում հայտնի իրավապաշտպան, հրատարակիչ **Ռագըփ Զարաքոլուն** իր «Բելգե» հրատարակչությունում վերահրատարակեց Թեոդիկի «Հուշարձանը», ընդ որում եռալեզու՝ թուրքերեն, հայերեն եւ անգլերեն: Գիրքն ունի ներածական բաժին, որը հագեցված է Զարաքոլուի բովանդակալից «Առաջաբանով», Հրանտ Դինքի կենսագրությամբ, ինչպես նաեւ նրա «Վախվորած աղավնու հոգեվիճակում եմ» հոդվածով եւ Թեոդիկի կենսագրությամբ:

Կենսագրական բաժնում ներկայացվում են Պոլսից տարագիր հայ մտավորականները, ազգային եւ կրթության գործիչները, աքսորավայրում հիվանդության պատճառով մեռնողները, նաեւ նրանք, ովքեր կախաղան են հանվել հենց Պոլսում: Երկրորդ բաժինը նվիրված է գավառին, որը ներառում է Արեւմտահայաստանի գրեթե բոլոր քաղաքները, ինչպես նաեւ Իզմիրը: Գրական բաժնում զետեղված են Բյուզանդ Պոզաճյանի «Դեպի Այաշ», Միքայել Շամտանճյանի «Ջանքըրից վերհիշումներ» հուշագրություններն ու նահատակ եկեղեցականները, իսկ վերջաբանի փոխարեն՝ «Ապրիլի 11-ի սգո հանդեսի» հանձնախմբի դիմում-կոչը հայրենակիցներին: Կա նաեւ անվանացանկ:

Թուրքական «Թարաֆ» թերթի մայիսի 31-ի համարում **Մարգար Եսայանն** անդրադարձել էր Ստամբուլում Թեոդիկի «Հուշարձանի» վերահրատարակմանը, որտեղ ըստ արժանվույնի գնահատել է պրն Զարաքոլուի հանդուգն ներդրումը, նշել է, թե ինչպես էր երազում այս գրքի վերահրատարակումը հանգուցյալ Հրանտ Դինքը: Սակայն ոչ գրքի բովանդակությունն էր ներկայացրել, ոչ նշել է, որ գիրքը հավասարապես թուրքերեն, հայերեն, անգլերեն ներկայացված է, ոչ էլ հարկ է համարել պրոֆ Դորա Սաքայանի անունը հիշելու: Մինչդեռ Զարաքոլուն, իբրեւ հրատարակիչ, եռալեզու կոթողային այս գրքի հրատարակման գործը նախաձեռնելու եւ գլխավոր խմբագրի պաշտոնն ստանձնելու համար անձամբ գրքում իր երախտագիտությունն է հայտնում Դորա Սաքայանին:

ԱՄՓՈՓՈՒՄ

# Անչափահասների շրջանում հանցագործությունների թիվը շատացել է

**Եթե նախորդ տարվա չորս ամսվա ընթացքում հանրապետությունում գրանցվել էր անչափահասների կատարած 92 հանցագործության դեպք, ապա այս տարվա նույն ժամանակի համեմատությամբ դրանց թիվը 28-ով աճել է՝ հասնելով 113-ի: Դրանք հիմնականում մանր գողություններ են, մարմնական վնասվածքներ: Ծանր հանցագործությունների համար գաղութում է 25 անչափահաս: Գաղութում չհայտնված, բայց հանցավոր ճանապարհի վրա կանգնած անչափահասների համար սահմանվում է հատուկ հսկողություն:**



**ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ Նելլի Դուրյանի ներկայացմամբ՝ այս տարի անչափահասների կողմից սպանության դեպքեր չեն գրանցվել: Փոխարենը նոր հանցատեսակ է ավելացել. թղթադրամներ են կեղծում ու իրացնում: 2009-ին գրանցվել է խուլիգանության 19 դեպք: 2008-ին հանրապետությունում գրանցվել է ինքնասպանության 28 դեպք: Դեռահասների մեջ դրանք սթրեսի կամ այդ տարիքում անպատասխան սիրո հետեւանք են: Կրոնական հողի վրա ինքնասպանություններ այս տարի չեն գրանցվել: Նման մի դեպք գրանցվել է 2009-ին, երբ 15-ամյա աղջիկն ինքնասպանություն էր գործել, ինչի կապակցությամբ այժմ գործը քննվում է:**

**Թեպետ ներկայացրած տվյալները մտահոգիչ են, սակայն Դուրյանը հավաստիացնում է, որ այլ երկրների համեմատությամբ Հայաստանը բարվոք վիճակում է: Հայաստանում շատ քիչ են անչափահասների կողմից թմրանյութեր օգտագործելու կամ վաճառելու դեպքերը: Քիչ են նաեւ թափառաշրջիկ, մուրացկան երեխաները: Եթե 1997-ին վարչությունը հաշվառել է 170 մուրացկան, ապա 2009-ին դրանց թիվը նվազել է՝ հասնելով 23-ի: Պատկերի փոփոխությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալական պայմանների բարելավմամբ, այլեւ մտածելակերպի փոփոխությամբ: Այժմ երեխաներն ամաչում են փող մուրալ եւ նախընտրում են աշխատել:**

**Անչափահասների շրջանում մարմնավաճառությամբ զբաղվող աղջիկներ չկան: Վարչության աշխատակիցների ուշադրության կենտրոնում են վարքի շեղումով երկու աղջիկ, որոնք տանը խնդիրներ ունեն: Ծնողները հրաժարվում են նրանց պահել, եւ տնից դուրս հանելու պարագայում նրանք կհայտնվեն փողոցում: «Ազգի» հարցին ի պատասխան Դուրյանն ասաց, որ թրաֆիկինգի դեպքեր չեն արձանագրվել, եղել են դեպքեր, երբ անչափահասներին դրդել են զբաղվել մուրացկանությամբ: Նման մի շարք դեպքեր բացահայտվել են, մեղավորները ենթարկվել են քրեական պատժի:**

Հ. Հ.

# Սառնարանում միշտ պահեք մածուն եւ հանքային ջուր



**Ամռան ամիսներին թունավորումներից եւ օրգանիզմի թուլացումից խուսափելու համար սննդակարգում կատարեք որոշակի փոփոխություններ: Գլխավորը՝ օրական առնվազն 4-5 բաժակ հեղուկ օգտագործեք: Նախընտրելի են հանքային ջուրն ու թանը, իսկ կերակուրի հետ օգտագործեք մածուն: Հայաստանի գլխավոր վարակաբան Արա Ասոյանը նկատում է, որ շոգ եղանակին մարդկանց օրգանիզմը աղերի եւ հեղուկի պակաս է զգում, հետեւաբար մածունն ու թանը կպաշտպանեն օրգանիզմը: Խորհուրդ է տրվում շատ հեղուկ օգտագործել հատկապես մայրանալու պատրաստվող կանանց: «Պետք չէ վախենալ գիրանալուց, քանի որ ամռանն այդ վտանգը չկա», նկատեց նա:**

**Խուսափեք նաեւ փողոցում վաճառվող սննդամթերքից եւ արագ փչացող մթերքներից: «Ոչ միայն պետք է գետնանցումներում վաճառվող սննդամթերքի նկատմամբ վերահսկողություն սահմանվի, այլեւ սուպերմարկետներում վաճառվող գեղեցիկ տեսքով խմորեղենի որակը նույնպես պետք է հսկվի: Ոչ ոք չգիտե, թե ովքեր են պատրաստում այդ խմորեղենը: Մինչդեռ խմորեղենից թունավորման դեպքերը հսկայական են», ասաց Ասոյանը՝ հավելելով, որ անհայտ ծագումով եւ «կրեմներով» խմորեղենի օգտագործումը բացառեն:**

**Գլխավոր վարակաբանը նկատում է, որ Հայաստանում աղիքային վարակները գրանցվում են հիմնականում աշնան ամիսներին: Ամռանը զգույշ եղեք, սակայն զգոնությունը մի կորցրեք հատկապես աշնանը: Դա պայմանավորված է մրգի եւ բանջարեղենի սպառմամբ: Թունավորումից խուսափելու համար անհրաժեշտ է դրանք օգտագործելուց առաջ երկար լվանալ հոսող ջրով:**

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 07/06/2010 22:04 Page 1



## Անցուդարձ

# «Լեզվի օրինագիծն իր սպառնալիքով հավասար է ազատագրված հողերի հանձնմանը»

Կառավարության նիստերի դահլիճում, ուր ժամանակավոր անցկացվում էին Ազգային ժողովի նիստերը, երեկ կրկին մարդաշատ էր: Ներսում պատգամավորներն էին, դրսում՝ «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» նախաձեռնության անդամները, մի շարք հասարակական կազմակերպությունների անդամներ, քաղաքական գործիչներ, որ պահանջում էին պատգամավորներից դեմ քվեարկել «Լեզվի մասին» օրենքի փոփոխությունների նախագծին: Նախաձեռնության անդամներից **Արմեն Հովհաննիսյանն** ընդգծեց, որ հարցի վերաբերյալ անզիջում են եւ պայքարելու են մինչեւ վերջ: Նախաձեռնության անդամները զրուցել են բազմաթիվ պատգամավորների հետ: Իշխող կուսակցության ներկայացուցիչներից շատերը հանդիպումների ժամանակ խոսել են նրանց դիրքերից: «Եթե քվեարկեն ոչ այնպես ինչպես խոսք են տվել, անունները կբացահայտենք: Այժմ անուններ տալու կարիք չկա», ասաց Հովհաննիսյանը:

Կինոռեժիսոր **Տիգրան Խզմալյանն** օտարալեզու դպրոցներ բացելու գաղափարը որակում է ոտնձգություն անկախության դեմ: «Ականատես ենք, թե ինչպես տարիներ շարունակ թիզ առ թիզ, քայլ առ քայլ հանձնում ենք մեր ազատությունը: Լեզվի օրինագիծն իր սպառնալիքով հավասար է ազատագրված հողերի հանձնմանը»:

ԱՄՆ-ում բնակվող **Արմինե Կոնդակչյանը** նկատում է, որ սփյուռքահայերի համար հայկական դպրոց ունենալը շատ կարեւոր է, եւ նրանք ամեն ջանք գործադրում են, որ նոր սերունդը հայեցի կրթություն ստանա ու պահպանի իր ինքնությունը: «Ապրելով սփյուռքում՝ գիտեմ, թե ինչ գերբնական ուժերով են պահում հայկական դպրոցները, մինչդեռ մեր իշխանությունները այսպիսի հարց են բարձրացնում, որ ուղղակի դավաճանություն է: ԱՄՆ-ում հասկանում են, թե լեզուն ինչ է նշանակում, բայց մենք չենք գիտակցում: Եթե այսպես շարունակվի, խաչ պետք է քաշենք մեր գրականության, թատրոնի վրա: Սա լեզվական ցեղասպանություն է»:



ՖՈՏՈԼՈՒՐ

«Միտք» վերլուծական կենտրոնի տնօրեն **Էդուարդ Աբրահամյանը** նախարարի ուշադրությունն է հրավիրում Ջավախքի դպրոցների խնդրի վրա, ինչի պարագայում անմտություն է օտարալեզու դպրոցների բացման մասին մտորելը: «Եթե ուզում են ոչնչացնել հայի տեսակը, պետք է ոչնչացնել հայի դպրոցը», պատասխան **Արվանցյանի** խոսքերն են: Այսօր Վրաստանն ու Ադրբեջանն այդ ուղղությամբ են քայլում, բայց անհասկանալի է Հայաստանի կառավարության դիրքորոշումը: Եթե ունենք անկախ պետականություն, հաղթած բանակ, ինչո՞ւ չամրապնդենք դպրոցները»:

Լիբանանահայ պատմաբան **Գեւորգ Յազըճյանը** սփյուռքահայ ընկերների խնդրանքով բողոքի ակցիայի մասնակցում էր «Հոս Հայաստա՞նն է» գրությամբ պաստառով: «Նրանք վրդովված են, իրարահաջորդ ազգադավ նախաձեռնություններից: Հիմա հերթը հասել է մեր ինքնությանը, հայտարարվել է պատերազմ մեր հայկական տեսակի դեմ: Հայոց լեզվի եւ հայկական կրթության դեմ այս մեղքը երբեք չենք ներելու», նկատեց նա:

Կառավարության նիստերի դահլիճ շտապող պատգամավորներին նրանք դիմավորում էին «Ամո՛թ, ամո՛թ» վանկարկումներով ու հիշեցնում, որ իրենց ձայների շնորհիվ են այնտեղ ԱԺ-ում. հետեւաբար իրենց կարծիքն էլ պետք է հաշվի առնել: Քննարկման շտապող ՀՀԿ-ական պատգամավորները հիմնականում սարկազմով ու քմծիծաղով տարտեսակ ռեպլիկներ էին բաց թողնում: ՀՀԿ մամուլի քարտուղար **Էդուարդ Շարմազանովն** ասաց, որ բողոքի ակցիայի կապակցությամբ որեւէ խնդիր չի տեսնում: «Մարդիկ իրենց կարծիքն են արտահայտում»: «**Ազգի**» հարցին՝ «ՀՀԿ-ում կա՞ն պատգամավորներ, որ դեմ են օրինագծին», պատասխանեց. «Բոլորս էլ օրենքի հետ կապված մտահոգություններ ունենք: Հանձնաժողովի նախագահ **Արտակ Դավթյանն է** ասել, որ կան մտահոգություններ: Մի բան պարզ է՝ ի հաշիվ հայոց լեզվի ոչինչ չպետք է լինի: Պետք է այնպես անենք, որ դպրոցը լինի հայրենասիրության տաճար, բայց նաեւ չծայրահեղականացնենք պրոբլեմն ու մեր մեջ փնտրենք դավաճանների»:

«Ժառանգություն» խմբակցության անդամ **Րաֆֆի Հովհաննիսյանն** ու **Զարուհի Փոստանջյանը**, որոնք մասնակցում էին բողոքի ակցիային, մինչ շենք մտնելը նախաձեռնության խորհրդանշանը՝ «Ա» տառն ամրացրին իրենց կրծքին:

ՀՅԴ-ական **Լիլիթ Գալստյանն** ասաց, որ կուսակցությունն իր համոզված «ոչը» հանձնաժողովի նիստում ասել է, ու այդ կարծիքը քվեարկության ժամանակ չի փոխվելու: Հարցը այս քառօրյայի օրակարգում ներառված է, սակայն երեկ չքննարկվեց: Նախաձեռնության անդամներն ավելի ուշ հայտարարեցին, որ այսօրվանից ամեն օր կառավարության նիստերի դահլիճի դիմաց կազմակերպելու են բողոքի ցույցեր:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀՅԴ-ն նոր, որակյալ վարչախումբ է ուզում ձեւավորել

**Հունիսի 4-6-ը Աղավնաձորում տեղի է ունեցել ՀՅԴ գերագույն ժողովը, որն ընտրել է նոր գերագույն մարմին, 9 հոգուց կազմված, առաջվա 15 հոգանոց ԳՄ-ի փոխարեն՝ Հրաչ Թադեւոսյան, Արմեն Ռուստամյան, Միքայել Մանուկյան, Հայրապետ Բաբայան, Սիմոն Սիմոնյան, Արսեն Համբարձումյան, Թաթուլ Հարությունյան, Սպարտակ Սեյրանյան, Արա Նռանյան կազմով: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը երեկ հայտնեցին Արմեն Ռուստամյանն ու Արա Նռանյանը: Երեկ տեղի է ունեցել նաեւ նորընտիր ԳՄ-ի անդրանիկ նիստը, որը ԳՄ ներկայացուցիչ նորից Արմեն Ռուստամյանին է ընտրել: Ռուստամյանը ներկայացրեց այս վերջին՝ 15-րդ գերագույն ժողովի նպատակը՝ 11 տարի իշխանության մաս կազմելու փուլի էջը պետք էր փակել, քանի որ կոալիցիայից դուրս գալուց հետո ՀՅԴ-ի համար նոր փուլ է սկսվել: ԳՄ հայտարարությունը անցյալի գնահատականներ էր պարունակում՝ ՀՅԴ-ն ամբողջական իշխանություն չի եղել, այլ միայն իշխանության մաս, իր չափով միայն պատասխանատու, իսկ ամբողջական իշխանություն չի եղել, քանի որ չի եղել նախագահը ամբողջական իշխանական բուրգում, բայց այս մասին շատ չծանրանանք, այլ միայն նշենք ԳՄ-ի հայտարարության առաջնահերթ խնդիրները, որոնց լուծումը ՀՅԴ-ն տեսնում է առաջիկայում. ազգային պետական ուղեգծի վերահաստատում (հայ-թուրքական հարաբերությունների եւ ղարաբաղյան խնդրում նահանջ չունենալու առումով), անկախ եւ անաչառ դատական համակարգի կայացում (չի կայացել), վստահություն վայելող ընտրական համակարգի ստեղծում (չկա): Քաղաքական եւ տնտեսական իշխանության սերտաճումն ու տնտեսության մոնոպոլացումը հանգեցրել են պետության եւ իշխող կուսակցության նույնացման, մոնոպոլիաներին սպասարկող տնտեսական քաղաքականություն է իրականացվում՝ պետք է փոխել, տագնապեցնող է աղքատության մակարդակը, արտագաղթի նոր ալիքի վտանգ կա եւ այլն: Մի խոսքով՝ ՀՅԴ-ն նշում է 4 խումբ ուղղություն իր առաջիկա աշխատանքում՝ ազգային ուղեգծի վերականգնում, սոցիալական արդարության հաստատում, քաղաքացիների իրավունքների պաշտպանություն, երկրում նոր իշխանության ձեւավորում. «... ներկայիս իշխանությունը պատրաստ չէ լուծել երկրի համար կենսական հարցեր, հետեւաբար պետք է ձեւավորվի նոր, որակյալ վարչակազմ, որն ի վիճակի կլինի հաղթահարել առաջացած խնդիրները», ասաց Ռուստամյանը:**

**Այս վերջինի մասով հետաքրքրվեցինք՝ արտահե՞րթ, թե՞ հերթական ընտրություններով է ուզում ՀՅԴ-ն նոր իշխանություն ձեւավորել. հերթական, մեր տիպի երկրում հեղափոխական ցնցումներ պետք չեն, պետք է չկաշառվող եւ իր ձայնին տեր կանգնող ընտրող դաստիարակել մինչեւ հերթական ընտրություններ, որ իշխանությունները չվերարտադրվեն՝ ըստ Ռուստամյանի: Բայց ֆորսմաժորային իրավիճակներ եւս հնարավոր են, անգամ սոցիալական պոստամբություն կարող է լինել, այս դեպքերի համար ՀՅԴ-ն որպես քաղաքական կուսակցություն նույնպես պատրաստ է: Նոր իշխանության ձեւավորում ասելով ՀՅԴ-ն նկատի ունի Ռոբերտ Քոչարյանին իշխանության վերադարձնե՞լը, հարցրին լրագրողները. «Ինչի՞, մեր կուսակցությունում ուրիշ մարդ չկա՞, որ Քոչարյանին բերենք», ասաց Ռուստամյանը՝ հավելելով, որ ՀՅԴ-ն երբեք չի եղել ինչ-որ մեկի կուսակցությունը եւ առաքելություն չունի ինչ-որ մեկին իշխանության վերադարձնելու. «Քոչարյանի գործն է, ինքն էլ թող գլուխ հանի»:**

Մ. Խ.

## ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# «Պետությունը պետք է տեր կանգնի փոքր բիզնեսին»

## *Գտնում է Արթուր Բաղդասարյանը*

**Հունիսի 5-ին «Օրինաց երկիր» կուսակցությունում կազմակերպված հերթական քննարկումը նվիրված էր փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման խնդիրներին, որին մասնակցում էին պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, փոքր եւ միջին ձեռներեցության շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներ:**

**Ողջունելով քննարկման մասնակիցներին՝ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը նշեց, որ փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման խնդիրներն այսօր ներառված են կոալիցիոն կառավարության ծրագրում: «Մենք մեր երկրում պետք է զարկ տանք ոչ թե օլիգարխիկ տնտեսությանը, այլ փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը»:**

**Այս առումով ՕԵԿ նախագահը նշեց, որ փոքր եւ միջին ձեռներեցների տոկոսները պետք է հասցվեն նվազագույնի եւ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացվեն Հայաստանում փոքր եւ միջին ձեռներեցությունը զարգացնելու համար. «Օրինաց երկիր» խմբակցությունն ԱԺ-ում շրջանառության մեջ է դրել «Հաստատագրված արտոնավճարների» մասին ՀՀ օրենքի նախագիծ: Նախագծի համաձայն՝ փոքր ձեռներեցները, ինչպես աշխարհի բազմաթիվ քաղաքակիրթ երկրներում, պետք է տարվա ընթացքում հաստատագրված արտոնավճար վճարեն եւ հնարավորինս զերծ մնան պետական, հարկային մարմինների հետ շփումներից: Պարտադիր չէ, որ կտրոնը կամ տաքսու վարորդը հարկային մարմնում հաշվառված լինեն, ինչքան շատ է գործարարը շփվում պետական կառույցների հետ, այնքան մեծանում են կոռուպցիոն ռիսկերը»,- մտանանեց Արթուր Բաղդասարյանը՝ հավելելով, որ այս նախագծի վերաբերյալ Կառավարությունն արդեն տվել է նախնական դրական եզրակացություն:**

**Քննարկման ընթացքում փոքր եւ միջին ձեռներեցության ոլորտի վերաբերյալ մի շարք խնդիրներ առաջ քաշեց ՕԵԿ տնտեսական վերլուծական կենտրոնի ղեկավար Գագիկ Մակարյանը: Ըստ նրա՝ Հայաստանը տարածաշրջանում ունի ամենամեծ թվով ձեռնարկությունները, սակայն միեւնույն ժամանակ չի կարողանում ապահովել համապատասխան մրցունակություն. 3 մլն բնակչության դեմքում Հայաստանն ունի 125 հազարին հասնող ձեռնարկություններ եւ ընդամենը 8.6 մլրդ դոլարի համախառն ներքին արդյունք:**

**Հայաստանյան ձեռնարկությունների արտադրողականությունը շատ ցածր է, հետեւաբար պետք է վերանայվեն փոքր եւ միջին ձեռներեցության աջակցության ծրագրերը, եկամուտների քաղաքականությունը՝ բարձր մրցունակություն ապահովելու համար:**

**Հայաստանում փոքր եւ միջին ձեռներեցներին խթանելու համար ոչ պակաս կարեւոր անելիքներից է վերջիններիս ֆինանսական մատչելի ռեսուրսների տրամադրումը: «Խանութը հաց է վաճառում, բանկը՝ փող, սակայն Հայաստանում դրամը վաճառվում է թանկ եւ բարձր տոկոսադրույքներով»,- նկատեց Արթուր Բաղդասարյանը: Այս խնդրի վրա էլ «Օրինաց երկիր»-ը պետք է նպաստակաուղղի իր քաղաքական գործունեությունը՝ հասկանալու, թե խնդրի լուծման համար ֆինանսական նորարական ինչպիսի մեխանիզմներ պետք է մշակվեն:**

**Փոքր եւ միջին ձեռներեցության ոլորտի խնդիրներին լիարժեք լուծում տալու համար ՕԵԿ նախագահ Ա. Բաղդասարյանը հանձնարարեց քննարկման ընթացքում հնչած առաջարկությունները ներառել «Հաստատագրված արտոնավճարների մասին» օրենքի նախագծում եւ առաջիկայում եւս մեկ քննարկում հրավիրել՝ հավելելով, որ կուսակցությունը հետեւողական է լինելու, որպեսզի այս օրենքը դառնա իրականություն:**

# Հայաստանի վերակառուցված ճանապարհը՝ ՀԲ մրցույթի հաղթող

**Հայաստանի «Կենսական նշանակության ճանապարհների բարելավում» ծրագիրը ճանաչվել է Համաշխարհային բանկի «Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում մարդկանց կյանքի բարելավման» մրցույթի 2010-ի 12 հաղթողներից մեկը: Այս մասին տեղեկացանք Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից: Մեզ տրամադրած հաղորդագրության մեջ նշված է, որ այդ կապակցությամբ ՀԲ տարածաշրջանային ենթակառուցվածքների ծրագրերի ղեկավար Օլիվյե Լը Բերը նախարար Մանուկ Վարդանյանին է հանձնել պատվոգիր: Մանուկ Վարդանյանը, կարեւորելով այս ծրագիրը, նշել է, որ այն նախապատրաստվել է արագացված ընթացակարգով եւ նպաստել Հայաստանին՝ դիմագրավելու համաշխարհային տնտեսական ճգնաժամին: Այս ծրագրով նախատեսվող 250 կմ ճանապարհներից նորոգվել է 150 կմ-ն:**

**Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են «Կենսական նշանակության ճանապարհների բարելավում» ծրագրի երկրորդ փուլի իրականացմանն առնչվող հարցեր: Նախարարության հաղորդագրության մեջ նշվում է, որ այս ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 190 կմ ճանապարհ:**

Ա. Մ.

# Սլովակիայի կադաստրի ղեկավարությունը Հայաստանում է

Հայաստանում գտնվող Սլովակիայի գեոդեզիայի, քարտեզագրության եւ կադաստրի գերատեսչության պատվիրակությունը՝ գերատեսչության նախագահ Ստեֆան Մոյզեսի գլխավորությամբ, երեկ հանդիպեց Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետկոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանի հետ:

Ինչպես հանդիպումից հետո լրագրողներին տեղեկացրեց Երվանդ Զախարյանը, այցը ճանաչողական է, սլովակները կլինեն մեր կադաստրի ստորաբաժանումներում, կայցելեն «Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման եւ համակարգված դիտարկումների կենտրոն», «Գեոդեզիայի եւ քարտեզագրության կենտրոն»: Լրագրողների հարցին, թե սլովակները այստեղ եկել են սովորելո՞ւ, թե՞ սովորեցնելու, Ստեֆան Մոյզեսը պատասխանեց, որ իրենք եկել են սովորելու հայ գործընկերներից եւ միաժամանակ իրենց փորձը փոխանցելու նրանց:

Ա. Մ.

# Ցավակցություն

Հայաստանի Թեքեյան Մշակութային միությունը եւ Ռամկավար Ազատական կուսակցությունը խոր վշտով ցավակցում են Ստեփանավանի Վ. Թեքեյան դպրոցի տնօրեն Վոլոդյա Մարտիրոսյանին իր սիրելի հարսի՝

**ԼԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**

վաղաժամ մահվան կապակցությամբ:

AZG NEW PDF.qxd 07/06/2010 22:04 Page 1



# Վազգեն սրբազան. «Ոմանց պատեհ առիթ է պետք եղած-չեղածը Վրաստանի վրա բարդելու»

## *«Հայաստանում շատ հայրենասեր են Վրաստանում ունեցած մեր խնդիրների եւ Ջավախքի հանդեպ, բայց կխնդրեի, որ թշնամաբար, թույնով լցված չխոսեն, չգրեն»*

***Մուղնեցոց Սուրբ Գեւորգ եկեղեցու, Վիրահայոց թեմի ու ընդհանրապես Վրաստանի հայ համայնքի որոշ խնդիրների առնչությամբ «Ազգի» հետ զրույցում իր տեսակետներն է ներկայացրել Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը՝ անդրադառնալով նաեւ Հայաստանից հնչող հայտարարությունների ու Վրաստանում հայության հանդեպ վերաբերմունքին եւ մթնոլորտին: Փաստորեն սրբազանը համբերատարություն է թելադրում:***

**- Փլուզված Մուղնեցոց Սբ Գեւորգ եկեղեցու ճակատագիրը շատերին է հուզում: Ի՞նչ փուլում է եկեղեցու վերականգնումը, որի առնչությամբ խոստումներ է տվել Վրաստանի իշխանությունը:**

- Աշխատանքների սկզբնական փուլը, կարծում եմ, ավարտվել է նրանով, որ քանդված, փլված եկեղեցու ավերակները մաքրվել են եւ անվտանգ դարձել շրջակա բնակչության համար: Թեեւ բնակչությունը մտահոգություններ ունի կիսականգուն պատերի առնչությամբ: Որքան տեղյակ եմ Վրաստան այցելած Հայաստանի մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի հանդիպումներից Վրաստանի համապատասխան գերատեսչությունների հետ, սպասվում է, որ վրացական կողմից հայտարարվի նախագծային աշխատանքների մրցույթ: Դա պիտի արվի, եւ միայն հետո կհաջորդի, թե ինչ կերպով տեղի կունենա վերականգնումը: Դա վրացական միջոցներով կլինի, թե՞ ուրիշ մի հիմնադրամից, չեմ կարող ասել:



**- Վիրահայոց թեմի կողմից ուսումնասիրություն արվել է, թե որքանով է հնարավոր Մուղնեցոց Ս. Գեւորգը վերականգնել որպես հայկական եկեղեցի:**

- Եկեղեցու փլուզման օրը մենք բողոք հղեցինք Վրաստանի վարչապետին, եւ նրա անունից մեզ պատասխան եկավ, որ իրենք շատ ափսոսում են եղածի համար եւ ամեն ինչ պիտի անեն՝ վերականգնելու այդ եկեղեցին: Թե ինչ կերպով կլինի հետագա ընթացքը, դժվարանում եմ ասել: Խնդիրն այստեղ պիտի դիտարկել ընդհանուրի մեջ, քանի որ այս եկեղեցին արդեն փլվել է:

**- Նույն ճանապարհին են նաեւ «վիճահարույց» որակվող մյուս եկեղեցիները:**

- Այո, Վրաստանի նախագահին եւս ասվել է այս մասին, նաեւ խորհրդարանի ղեկավարին եւ պատրիարքին, որ եթե այս ընթացքը մնա, մենք կկորցնենք մյուս երեք կանգուն եկեղեցիները՝ երկուսը Թբիլիսիում եւ մեկը Ախալցխայում: Այս առումով բերում ենք մի օրինակ: Երբ Վեհափառ հայրապետի օգնությամբ վերանորոգվեց Հավլաբարի Ս. Էջմիածին եկեղեցին, մենք այլեւս կարողանում ենք ի լուր աշխարհի ասել՝ մեր ձեռքում էր, ճաքեր կային, պիտի փլվեր, բայց փրկեցինք: Եթե մյուս եկեղեցիներն էլ մեզ վերադարձվեն, մենք Էջմիածնի, Հայաստանի կառավարության, սփյուռքահայության օգնությամբ ձեւեր կգտնենք վերականգնելու եւ փրկելու այդ տաճարները: Իսկ եթե նույնիսկ չեն վերադարձնում եւ սպասում են, այսպես կոչված, պատկանելության հարցերի ճշտմանը, ապա մենք առաջարկում ենք, որ որպես Վրաստանի հուշարձան իրենք վերականգնեն: Պետական մարմինների կամ պատրիարքարանի բոլոր հանդիպումներում մենք տեսնում ենք կարծես թե հասկացողություն մեր ցավի, բայց լուծում չկա:

**- Հակասություն չե՞ք տեսնում, որ, մի կողմից, Վրաստանը չի վերադարձնում եկեղեցիները Վիրահայոց թեմին, մյուս կողմից՝ կարծես ընդունվում է այդ եկեղեցիների հայկականությունը:**

- Հայկականը չընդունող երեւի քիչ մարդիկ կգտնենք, միայն որոշները կարող են պնդել, թե այդ եկեղեցիները հայկական չեն, այլ՝ վրացական: Պատմաբանների, Վրաստանի ղեկավարության եւ պատրիարքարանի համար վաղուց այդ եկեղեցիները հայտնի են որպես հայկական, որովհետեւ որեւէ փաստարկ չկա դրան հակառակ: Մենք ներկայացնում ենք հաստափոր գիտական գրքեր, որոնցում արձանագրություններով, փաստերով, վավերագրերով հաստատված են այդ եկեղեցիների հայապատկան լինելը: Դիմացի կողմից կես էջ փաստաթուղթ իսկ չի ներկայացվում, թե դրանք վրացական են: Կարծում եմ, այստեղ մթնոլորտի հարց կա: Պետությունը վաղուց հոգնել է, եւ եթե իրեն մնա, այդ հարցերը կլուծվեն միանշանակ: Բայց հավանաբար հաշվի առնելով իրենց երկրի՝ հատկապես 2008 թ. հետպատերազմյան ընդհանուր մթնոլորտը, գուցե չեն ուզում լարվածություն ստեղծել ծայրահեղ ազգայնականների հետ եւ բավարարվեցին առայժմ այնքանով, որ Թարիել կոչվածին ընդհանրապես վռնդեցին այդտեղից:

**- Այսինքն՝ Ս. Նորաշեն եկեղեցու նկատմամբ ոտնձգություններ իրականացրած վրացի հոգեւորական հայր Թարիելը այլեւս եկեղեցու սպասավոր չէ՞:**

- Հիմա նա ուրիշ տեղ է ծառայում, Նորաշենի տարածքի հետ որեւէ առնչություն չունի եւ իրեն զգուշացվել է, որ պատասխանատվության կենթարկվի, եթե շարունակի իր գործունեությունը: Ներկա դրությամբ իրավիճակը սա է: Գուցե բանակցությունները, որ վարում ենք իրենց հետ, եւ որ Հայաստանի հարաբերությունները Վրաստանի հետ լավ են, ինչ-որ դրական մթնոլորտ ստեղծեն հարցերի լուծման համար: Նաեւ մեկ այլ բան եմ ուզում նշել: Գիտեմ, որ Հայաստանում շատ հայրենասեր են Վրաստանում ունեցած մեր խնդիրների եւ Ջավախքի հանդեպ, բայց կխնդրեի, որ թշնամաբար, թույնով լցված չխոսեն, չգրեն: Դրանք խնդիրներ են, որ վերջ-առաջ լուծում ստանալու են: Մենք հույսով ենք, որ դրական լուծում են ստանալու՝ հօգուտ հայության: Բայց դրա համար էլ անհրաժեշտ է, որ բոլորս ձգտենք դրական մթնոլորտի: Ավելորդ հայտարարություններից ոչ մի լավ բան չի գալիս, այսինչ-այնինչ ակումբում եկան, խոսեցին, բայց ոչինչ չի փոխվում, միայն մթնոլորտի շիկացում է տեղի ունենում:

**- Այսինքն՝ նկատի ունեք, որ Հայաստանում սպասողական դիրք ընդունեն եւ չարձագանքե՞ն:**

- Ոչ թե սպասողական դիրք ընդունեն, այլ մեր հայությանը հուզող հարցերը բարձրացնեն, բայց ոչ ծայրահեղության, թշնամական տրամադրությունների, այլ ռեալ բարձրացնեն, փորձեն իրենց վրացի գործընկերների հետ հարցեր լուծել: Հայաստանում կա վրացական բարեկամության խորհրդարանական խումբ, բայց մի օր եկե՞լ են, հանդիպե՞լ են, խոսե՞լ են: Բայց շատ անգամ իրենց հայտարարություններն ենք կարդում: Կամ՝ ավելորդ միտինգները Վրաստանի դեսպանատան առաջ. ոչինչ չի տալիս դա: Կամ՝ Հայաստանի լրատվամիջոցներով առավոտից երեկո խոսում են Վրաստանի մասին, Վրաստանում մի գառ էլ ընկնի գետը, ցույց կտան ու կխոսեն: Դրա կարիքը չկա: Վրաստանի հեռուստաընկերությունները գուցե երեք ամիսը մեկ, չգիտեմ ինչ լինի, որ անդրադառնան Հայաստանին:

**- Բայց յուրաքանչյուր կողմ անդրադառնում է ըստ հետաքրքրությունների:**

- Վրաստանում հազվադեպ են անդրադառնում Հայաստանին եւ շատ ճիշտ են անում, որովհետեւ իրենց համար կան Վրաստանի հարցերը: Բայց ես չգիտեմ ինչու՝ ամբողջ Հայաստանն ապրում է Վրաստանով. ինչո՞ւ, ուրիշ անելիք չունե՞նք, ներքին խնդիրներ չունե՞նք, հարցեր չունե՞նք: Մենք շատ անգամ այստեղ տեղյակ չենք, թե որ գետից ինչ ջրհեղեղ եղավ, արդեն զանգում են, թե ինչ է եղել: Չի կարելի մի ժողովրդին ապրեցնել մյուս՝ հարեւան ժողովրդի կամ նրա ղեկավարների կյանքով: Մթնոլորտ է պետք փոխել, ձեւն է պետք փոխել, մենք արդեն փորձառություն ունենք: Առաջարկում եմ Վրաստանի հետ կապված ձեւաչափը փոխել. մենք շատ ավելի մեծ տեղ ենք տալիս Վրաստանին, քան դրա կարիքը կա:

**- Գուցե ես ճիշտ չեմ հասկանում ձեր դժգոհությունը, բայց կարծես ասվածն ուղղված է Ախալցխայի Ս. Երեւման կաթողիկե եկեղեցու պատմությանը, երբ հենց Ախալքալաքից տեղեկացանք, թե քանդում են ավերակ եկեղեցու կանգուն հատվածները:**

- Ոչ միայն այդ պատմությանը, ընդհանրապես, ես ինչպես հասկանում եմ, Հայաստանում, այդ առումով, մենք ունենք մարդիկ, որ, ընդունված խոսքով, «Հռոմի պապից ավելի պապական են»: Մենք՝ որպես առաջնորդ, բանից պարզվում է, այդպես սրտացավ չենք, հայր Բաբկենը որպես փոխառաջնորդ սրտացավ չէ, բայց Երեւանի այս ու այն տաքուկ գրասենյակներում ու թեյարաններում նստած հայտարարություն անողները շատ սրտացավ են: Բաբկեն վարդապետը այսպես կոչված այդ իրադարձությունների հաջորդ օրը այնտեղ էր: Ախալցխայի մեր երիտասարդությանը, նույն տեր Մանուկին, որ շփոթված հայտարարություններ էր արել, խնդրեցին ցույց տալ կոտրված խաչքարերը կամ քանդված խորանը՝ չկար: 20 տարի առաջ արված նկարներում այդ խորանի տեղը մի կույս է: Այդ մարդիկ միայն մաքրել են: Եվ հետո՝ ինչն է հետաքրքրականը: Այդ աշխատողներն այդտեղ են եղել երկու շաբաթ, այդ ընթացքում որեւէ մեկը չի հարցրել, թե ինչ եք անում: Երկու շաբաթ հետո, երբ այնտեղ ինչ-որ փոքր աշխատանք է եղել, նոր այդ մեծ աղմուկը առաջացավ: Դրա համար մենք ասացինք, որ նախ սկզբնական հայտարարությունները չէին համապատասխանում իրականությանը: Բացի այդ, դա վերջին 200-250 տարին եղել է հայ կաթողիկե եկեղեցի: Այսօր Հռոմեական կաթոլիկ եկեղեցուն է վերադարձված, իրենք թող նայեն: Մենք այդ եկեղեցին երբեւէ չէինք կարող վերականգնել, դրա համար միլիոնավոր դոլարներ են պետք: Նույն եկեղեցու կողքին ունենք ոչ պակաս հնամենի ճարտարապետությամբ Սուրբ Ստեփանոս եկեղեցին, սրտացավ մեր հայերը թող գան եւ այդ եկեղեցին վերականգնեն:

**- Ձեր կողմից հայտարարություն էր արվել, թե Վիրահայոց թեմը գործ չունի Ս. Երեւման եկեղեցու հետ, քանի որ պատկանում է Հռոմեական կաթոլիկ եկեղեցուն: Արդյոք նման վերաբերմունք ունի՞ Հայ առաքելական եկեղեցին հայկականությանը:**

- Ինչն այստեղ հայկական է, մեզ վերաբերում է: Ես ասել եմ հետեւյալը. հանդիպել ենք Վատիկանի, Հռոմեական կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչներին եւ ճշտել ենք, որ իրենք հավաստիացրել են նաեւ Ամենայն հայոց կաթողիկոսին, որ եկեղեցին կվերականգնվի այնպես, ինչպես եղել է՝ պահպանելով ամեն հայկականը: Սա, կարծում եմ, մեզ լրիվ բավարարում է: Մեզ համար կարեւոր է, որ վերականգնվի՝ պահպանելով հայկականությունը, խաչքարերը, արձանագրությունները: Մենք այդ առումով կաթոլիկներից վախ չունենք: Մենք մտահոգություն ունեինք, որ հանկարծ իրենք չվերցնեն, ու ինչ-որ այլ հարանվանությունից գնային ու տեր կանգնեին, այն ժամանակ բավականին բարդություններ էին լինելու: Այնպես որ, ես մի բան եմ հասկացել, ոմանց ուղղակի պատեհ առիթ է պետք եղած-չեղածը վրացիների եւ Վրաստանի վրա բարդելու: Որքան այդ բանվորների մեջ վրացի կար վարձու, այդքան էլ ախալցխացի հայերն էին այնտեղ: Դրա համար որ ասում են, թե վրացիները քանդում են, ախր ո՞վ է քանդում: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու հանձնարարությամբ այնտեղ մասնագետներ են աշխատել: Ու ոչ ոք չի զանգահարում ու հարցնում, թե այ առաջնորդ, ինչը ոնց է: Մենք կարծում ենք, որ ոմանց ուղղակի անհրաժեշտ էր, որ այդ հարցը դարձնեին մեծ հարց, որն էլ կդառնար հայ-վրացական մի մեծ խնդիր: Եվ արդեն իսկ նկատելի է, որ որոշ կազմակերպություններ կան Հայաստանից, որ ինչ-որ երրորդ տեղերից են ֆինանսավորվում, եւ որոնց ձեռք չեն տալիս բացարձակապես հայ-վրացական դրական հարաբերությունները, եւ ամեն ինչ անում են, որ խառնեն իրար, եւ ես չգիտեմ, թե վերջում ինչ է դուրս գալու:



Թբիլիսիի Մուղնեցոց Սբ Գեւորգ եկեղեցու ներկա վիճակը

**- Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե Դուք էլ, սրբազան, խոսում եք ռուսական կողմից «հավանական խառնակչությունների» մասին, ինչի մասին պնդում են վրացիները:**

- Ես չեմ կարող որեւէ պետության կամ ազգի անուն տալ, բայց կարող եմ ասել, որ մեր ազգի շահերից չբխող գործունեություն ծավալող ինչ-որ կառույցներ են, ինչ-որ մարդիկ: Եթե մենք տեսնում ենք, որ որոշ կազմակերպությունների եւ անհատների գործունեությունը ոչ մի լավ բան չի բերում, բացի ավելորդ լարվածությունից եւ վրացական կողմից հայերի նկատմամբ անվստահությունից, ուրեմն եկեք նայենք, թե որն է դրա արդյունքը: Մենք 1915-ի ցեղասպանություն ապրած ժողովուրդ ենք, գոնե օր օրի մեր աչքերը բացվում է, եւ հասկանում ենք, թե դա ոնց եղավ: Ո՞նց եղավ: Այդպես եղավ: Հո օդից չեղա՞վ: Թուրքերը մեզ տալիս էին մեծ-մեծ հնարավորություններ տնտեսության մեջ, ու հանկարծ ցեղասպանություն եղավ: Սրանք խնդիրներ են, որ հայությունը պիտի նայի եւ իրավունք չունի սխալվելու:

**- Այս բացասական ֆոնին ուրախ եմ տեսնելու, որ Վիրահայոց թեմի առաջնորդարանի շենքը բարեկարգ վիճակում է:**

- Հին շենքը քանդեցինք, նորը կառուցեցինք: Դրական երեք լավ բան պիտի ասեմ: Առաջինը Ս. Էջմիածին եկեղեցու փրկությունն էր: Երկրորդը, որ Թբիլիսիի քաղաքապետարանի աջակցությամբ անխոչընդոտ կառուցեցինք այս առաջնորդարանը: Այս պահին մենք ավարտել ենք նախագծային աշխատանքները նաեւ Ս. Էջիածնի կողքը մշակույթի երկհարկանի կենտրոն կառուցելու համար, շուտով կներկայացվի հաստատման: Մշակույթի կենտրոնը կծառայի համայնքին՝ ցուցահանդեսներ, հանդիպումներ, մշակույթի տարբեր միջոցառումներ անցկացնելու: Մշակույթի մեր գործիչները ցանկություն են հայտնել մեր երեխաներին անվճար վարպետաց դասեր տալու: Նաեւ երիտասարդները կկարողանան հավաքվել, համատեղ տարբեր միջոցառումներ իրականացնել: Լիահույս ենք, որ մինչեւ սեպտեմբերի վերջ կավարտենք շինարարությունը:

**- Հունիսի սկզբին ծրագրված է Վրաստան եւ Ջավախք Ամենայն հայոց կաթողիկոսի այցելությունը: Ի՞նչ տեղեկություններ կարող եք տրամադրել այդ առնչությամբ:**

- Կարծում եմ, պետք է սպասենք Սուրբ Էջմիածնի պաշտոնական հայտարարությանը (այդ հայտարարությունն արդեն իսկ արվել է, որի համաձայն՝ կաթողիկոսի այցը հետաձգվել է հոկտեմբեր ամսին՝ վրացական կողմի խնդրանքով - Ա.Հ.) եւ սպասվող այցելության ժամանակ Սամցխե-Ջավախք այցելությունը ուժի մեջ է մնում: Ջավախքում նախատեսվում է այցելություն Ախալքալաք, Ախալցխա, Նինոծմինդա, մեկ-երկու գյուղ, հանդիպում ժողովրդի հետ, դպրոցներ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թբիլիսի-Երեւան

AZG NEW PDF.qxd 07/06/2010 22:04 Page 1





# Էրդողանը դժբախտաբար այս օրերին դարձել է արաբական աշխարհի հերոսը

Անցած կիրակի օրը իսրայելական կործանիչներն արդեն իսկ «փորձնական գրոհներ» էին կատարում Հարավային Լիբանանի գյուղերի եւ ավանների վրա... Նախապատրաստելով այս բազմաչարչար երկրի դեմ նոր «ավանտյուրա», 2006-ի ամռան նման: Նաթանյահուի գլխավորած կառավարությունը միջուկային զենքով Սիրիան ու Լիբանանը «քարեդարյան քաղաքակրթություն» վերադարձնելու սպառնալիքներ էր տեղացնում, իբր թե «Հըզբոլլահ»-ի «Սկադ» հրթիռների հավանական գործածությունը արգելելու եւ այդ պատրվակով նոր սպանդներ կազմակերպելու արաբների դեմ:

Նույն ժամերին, Իսրայելի կողմից Եվա Ռիվասին Eurovision-ի ելույթին 10 բալ նվերը՝ արդեն իսկ հարբեցրել էր Հայաստանի որոշ քաղաքական այրերին ու մեկնաբաններին, որոնք առանց ամաչելու ամբողջ աշխարհով մեկ դիտվող արբանյակային հաղորդումներով՝ փառաբանում էին հայ-իսրայելական «եղբայրական» հարաբերությունները, գովերգում ծագումով հրեա կոնգրեսմենների եւ սենատորների «նորահայս» եւ «հավերժ» սերը հայ ժողովրդի հանդեպ Ցեղասպանության ճանաչման գործընթացում, վկայակոչում «հակաթուրքական» նրանց հայտարարությունները առանց հիշելու, թե ավելի քան մի քառասնամյակ Իսրայելն ու Թուրքիան ռազմական ամենաջերմ դաշնակիցներ են եղել:

Արդ պայթեց «Ազատության նավատորմ»-ի սկանդալը, երբ մարդկային ու միջազգային ամեն իրավունք ոտնակոխած Իսրայելը, որի «պատմական» ղեկավարներ Արիել Շարոնի, Իցհակ Շամիրի, Մենախիմ Բեգինի, Գոլդա Մայերի, Ցիփի Լիվնիի, Բենիամին Նաթանյահուի նմանների ուսերին են ծանրանում ավելի քան 1 միլիոն պաղեստինցի, արաբ ազգաբնակիչների զանգվածային սպանդը, ձերբակալությունները, տեղահանությունը՝ 1947-ից մինչեւ այսօր: Առավել եւս Գազայի ազգաբնակչությանը «պատժելու» համար Իսրայելը ծովային ու ցամաքային բլոկադա է հայտարարել, քարուքանդ անելով անցած տարի հազարավոր բնակարաններ ու կենցաղային օբյեկտներ, սպանելով կանանց ու երեխաների, փորձելով սովամահ անել մի ամբողջ ժողովուրդ, այն էլ 21-րդ դարի առաջին տասնամյակում, Արեւմուտքի ու նրա դրածոների «մարդասեր» հայացքի առաջ...

Սպանելով 16 ու վիրավորելով-հաշմելով մի քանի տասնյակ «Ազատության նավատորմ»-ի անդամներին, ի վերջո, ամբողջ աշխարհով մեկ դատապարտման ու բողոքի ալիք բարձրացավ ինչպես արաբական երկրների, այնպես էլ մեծ տերությունների կողմից, որոնց կարգին՝ Ռուսաստանն էր: Դժբախտաբար Հայաստանը, ինչպես 2000 թվականի Լիբանանյան ողբերգության ժամանակ, նախընտրեց պահպանել իր «դրական չեզոքությունը»:

Մի քանի օր առաջ հայաստանյան հեռուստաընկերություններից մեկի արբանյակային հաղորդումը հետեւելով՝ ականջալուր եղանք քաղաքական մի «պայծառափայլ» մեկնաբանի ցինիկ ժպիտով ասված խորհուրդներին, երեւի ուղղված Մերձավոր Արեւելքի հայերիս՝ տառապել «իսրայելամոլության» ախտով, իսկ նույն ժամերին՝ Բեյրութում թե Սայդայում, Դամասկոսում, Կահիրեում, Ամմանում եւ այլուր, բյուրավոր ցուցարարներ Էրդողանի մեծադիր լուսանկարներով ու թուրքական դրոշներով «զինված», փառաբանում էին, դժբախտաբար, «300 միլիոնանոց արաբական աշխարհի մեր օրերի հերոսին»: Նրա հայտարարություններն ու քայլերը՝ Իսրայելի ոտնձգությունների դեմ, «մաս» էին արել նաեւ Եգիպտոսի ու Հորդանանի վարչակարգերին, որոնք շտապեցին ի վերջո բանալ Ռաֆահի մարդասիրական անցքը՝ Գազա-Եգիպտոսու սահմանագծում:

Արդյո՞ք Հայաստանի քաղաքական դեմքերին ու «ամենագետ» վերլուծաբաններին ավելի են հետաքրքրում Eurovision-ի մրցումները, քան ի վերջո հասկանալը, թե Մերձավոր Արեւելքում ռազմաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծվում, որը ղեկավարվելու է հայերի ոխերիմ թշնամի Թուրքիայի կողմից...:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՖՅԱՆ
Բեյրութ

# ԵՄ-ը պատրաստ է ստանձնել Գազա առաքվող բեռների ստուգումները



Եվրոմիությունը կարող է ստանձնել նավերով Գազա առաքվող բեռների ստուգման գործը, հայտարարել է Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Կուշները Փարիզում իր բրիտանացի պաշտոնակից Ուիլյամ Հեյգի հետ կազմակերպած մամլո ասուլիսում: Ֆրանսպրեսը մեջբերում է Կուշների այն խոսքերը, որ ԵՄ-ը կկարողանար «շատ լավ կազմակերպել նավերի ստուգումը եւ շատ կուզենար զբաղվել դրանով»:

ԵՄ-ը նաեւ պատրաստ է պատասխանատվություն ստանձնել Գազա-Եգիպտոսու սահմանագծին գտնվող Ռաֆահի հսկիչ անցակետի աշխատանքի համար:

Ուիլյամ Հեյգն իր հերթին հիշեցրել է, որ եվրոպացի դիտորդներն անցյալում արդեն հետեւել են Ռաֆահի անցակետի աշխատանքին: Հեյգի խոսքերով, եթե Ռաֆահի հսկիչ անցակետը ԵՄ վերահսկողության տակ լինի, ապա կհաջողվի Գազայի հատվածին մատակարարել անհրաժեշտ բեռներ եւ միաժամանակ թույլ չտալ զենքի առաքումներ պաղեստինյան տարածքին:

Երկու արտգործնախարարները նաեւ հայտարարել են, որ անհրաժեշտ է անցկացնել մայիսի 31-ի միջադեպի միջազգային քննություն: Այդ օրը իսրայելական հատուկ ջոկատի զինծառայողները հարձակվել էին շրջափակված Գազայի բնակչությանը մարդասիրական բեռներ տանող «Ազատության նավատորմիղի» 6 նավերից մեկի վրա եւ դիմադրության հանդիպելով՝ սպանել Թուրքիայի 9 քաղաքացիների: Թուրք-իսրայելական հարաբերություններում դրանից հետո ծագած լարվածությունը մինչեւ օրս պահպանվում է: Աշխարհի տասնյակ երկրներում անցկացվել են հակաիսրայելական ցույցեր: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հատուկ բանաձեւով դատապարտել է Իսրայելի գործողությունները եւ կոչ է արել հնարավորինս շուտ անցկացնել միջադեպի քննություն:

Իսրայելն ուզում է ինքնուրույն անցկացնել միջադեպի քննությունը եւ մտադիր չէ վերջ տալ Գազայի հատվածի շրջափակմանը:

# Իսրայելցի ուսանողները պատասխանում են Էրդողանին

## Նրանք նավով օգնություն կտանեն Թուրքիայում ապրող հայերին ու քրդերին

**Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթի փոխանցմամբ՝ իսրայելցի մի խումբ ուսանողներ որոշել են «բացահայտել թուրքական կառավարության երեսպաշտությունը»: Ի պատասխան վարչապետ Էրդողանի մեղադրանքների ու սպառնալիքների՝ երիտասարդները որոշել են թուրքերի գործողություններից տուժած հայերի ու քրդերի համար նախատեսված մարդասիրական օգնության «Խաղաղության նավախումբ» կազմել եւ ուղեւորվել Թուրքիա: Ըստ «Երկրամասի»՝ այժմ ուսանողները լուծում են նավի վարձակալման խնդիրները: Նրանք արդեն ձեռք են բերել դեղորայք, բժշկական սարքավորումներ թուրքաբնակ հայերի ու քրդերի համար: «Մենք որոշել ենք գալ եւ օգնել Թուրքիայում բնակվող փոքրամասնություններին եւ ցույց տալ ողջ աշխարհին, թե որքան երեսպաշտ է թուրքական կառավարությունը: Մենք վստահ ենք, որ Թուրքիան չի խոչընդոտի, որ մենք մարդասիրական օգնությունը փոխանցենք: Դա կլինի խաղաղ արշավ՝ առանց դանակների եւ քարերի, որոնցով «Ազատության նավախմբի» «խաղաղարարները» դիմավորեցին իսրայելցի զինվորներին: Եթե Էրդողանի խոսքերը համապատասխանում են նրա բարի տրքին, չնայած մենք բոլորս գիտենք, որ դա այդպես չէ, ուրեմն նա չպետք է ունենա որեւէ պատճառ՝ մարդասիրական օգնությունը մերժելու համար», հայտարարել է համաիսրայելական ուսանողական միավորման նախագահի Բոազ Տոպորովսկին:**

Հ. Ա.



# Ամերիկյան հատուկ ջոկատներ 75 երկրում

**Նախագահ Բարաք Օբաման հավանություն է տվել այն ծրագրին, ըստ որի հակաահաբեկչական պայքարի շրջանակներում հատուկ նշանակության զորքեր կտեղաբաշխվեն աշխարհի 75 երկրներում: Այդ մասին հաղորդում է Լոնդոնի «Թայմս» թերթը:**

**Ավելի վաղ ամերիկյան հատուկ ջոկատների գաղտնի գործողությունների իրականացումը թույլատրված էր 60 երկրում: Գաղտնի գործողությունների նոր ասպարեզներ են դառնում Արեւելյան Աֆրիկայի երկրները, Եմենը, որտեղ ուժեղ են «Ալ Ղաիդայի» դիրքերը, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքը եւ Կենտրոնական Ասիան: Առայժմ չկան մանրամասն տեղեկություններ, թե կոնկրետ որ երկրներում են գործում ամերիկյան հատուկ ջոկատները:**

**Պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը կարգադրել է առաջիկա հինգ տարում պաշտպանական բյուջեից ծախսերի առանձին հոդվածների կրճատման հաշվին ազատել մոտ 100 մլն դոլար, որի մի մասը կհատկացվի գաղտնի գործողություններին:**

**Հատուկ նշանակության զորքերի գործունեության ընդլայնման մասին հայտնի էր դարձել մայիսի վերջերին, սակայն շատ մանրամասնություններ դեռ անհայտ են: Ներկայումս ԱՄՆ-ից դուրս կան հատուկ ջոկատների 13 հազար մարտիկներ, այդ թվում 9 հազարը՝ Աֆղանստանում եւ Պակիստանում:**

**Վերջերս որոշ հաջողություններ են արձանագրվել «Ալ Ղաիդայի» դեմ մղվող պայքարում: Այսպես, մայիսին աֆղանա-պակիստանյան սահմանի մոտ սպանվեց «Ալ Ղաիդայի» աֆղանական մասնաճյուղի առաջնորդ Մուստաֆա Աբու ալ Յազիդը, որը միջազգային ահաբեկչական ցանցի 3-րդ դեմքն էր Ուսամա բեն Լադենից եւ Այման ալ Զաուահիրիից հետո:**

# BP-ն 48 մլն դոլար է վճարել ըստ դատական հայցերի

**«Բրիթիշ փեթրոլիում» (BP) նավթային ընկերությունը ավելի քան 48 մլն դոլար է վճարել Մեքսիկական ծոցի վթարի կապակցությամբ իրեն ներկայացված դատական հայցերով:**

**BP-ի փոխնախագահ Դերիլ Ուիլլիսի խոսքերով, ծովային նավթահարթակի պայթյունից հետո անցած մեկուկես ամսում ընկերությունը փոխհատուցումներ է վճարել 37 հազար հայցերից 18 հազարի դիմաց: Նա հավաստիացրել է, որ վճարումները կշարունակվեն, մինչեւ բավարարվեն բոլոր հայցերը: Ուիլլիսի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:**

**Նախագահ Բարաք Օբաման հունիսի 4-ին Լուիզիանայի նահանգում քննադատել էր BP-ին, ասելով, որ ընկերությունը ժլատ է իր բանվորների եւ տուժած ափամերձ շրջանների բնակչության հանդեպ: Դրանից հետո BP-ի ղեկավարությունը պատրաստակամություն էր հայտնել նոր վճարումներ կատարելու Լուիզիանայի, Միսիսիպիի, Ալաբամայի եւ Ֆլորիդայի տուժած բնակիչներին եւ գործարարներին:**

**Այդ նպատակով BP-ն պատրաստ է ծախսել հավելյալ 84 մլն դոլար, որը պետք է ծածկի նավթահարթակի վթարի պատճառով հունիսին բնակիչների կրած եւ կրելիք կորուստները:**

# Կահիրեն հրեուհիների հետ ամուսնացողներին կարող է զրկել քաղաքացիությունից

Կահիրեի գերագույն դատարանը հաստատել է ստորին ատյանի դատարանի վճիռը, որը Եգիպտոսի կառավարությանը կոչ է անում քննության առնել հրեուհիների հետ ամուսնացած անձանց քաղաքացիությունից զրկելու հարցը: BBC-ն հաղորդում է, որ գերագույն դատարանին գանգատարկումով դիմել էր երկրի ներքգործնախարարությունը:

Դատավճռի հիման վրա կառավարության քննարկմանը պետք է ներկայացվեն այն բոլոր դեպքերը, երբ Եգիպտոսի քաղաքացու կինն իսրայելցի է:

Ներկայումս Եգիպտոսում հակաիսրայելական տրամադրությունները բավական ուժեղ են «Ազատության նավատորմիղի» հետ կապված միջադեպի պատճառով: Սակայն իսրայելցի կին ունեցողների հարցն ավելի վաղ էր հայտնվել օրակարգում:

Դատարանը վճռեց, որ կառավարությունը պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում լուծի եգիպտացի տղամարդուն եւ նրա զավակներին քաղաքացիությունից զրկել-չզրկելու հարցը: Ներկայումս Եգիպտոսում մոտ 30 հազար մարդ ամուսնացած է հրեուհու հետ:

Եգիպտոսի օրենքը թույլ է տալիս մարդուն քաղաքացիությունից զրկել լոկ այն դեպքում, եթե ապացուցվի, որ նա լրտեսություն է արել իր երկրի դեմ: Դատավճիռը ենթադրում է, որ իսրայելցի կին առած ամեն ոք լրտեսության ակտ է կատարել:

Դատավճիռը պաշտպանող եգիպտացի իրավաբաններից մեկը հայտարարել է, որ եգիպտացու եւ հրեուհու ամուսնությունից ծնված զավակներին չպետք է թույլատրվի ծառայել եգիպտական բանակում:



Մինչդեռ իրավապաշտպան Նեգադ էլ Բորային զարմանք է արտահայտել կառավարության «տարօրինակ» քաղաքականության առնչությամբ: «Նախագահը Իսրայելի ղեկավարին շնորհավորում է ազգային տոների առթիվ եւ միաժամանակ պատժում է իսրայելցիների հետ կապեր հաստատողներին», հայտարարել է իրավապաշտպանը Ռոյթեր գործակալությանը տված հարցազրույցում:

AZG NEW PDF.qxd 07/06/2010 22:05 Page 1



# Խորհեր՝ նախարարի համար

Օտարալեզու դպրոցներ բացելու կառավարության նախագիծը օրենք դառնալու ճանապարհի վերջին հանգրվանում է. «լրամշակված» տարբերակը ներառվել է ԱԺ քառօրյայի օրակարգ: Իսկ նախագծի երեւութական կնքահայր նախարար Ա. Աշոտյանը շարունակում է կշտամբել հասարակությանը, որն իբր չի արդարացրել իր հույսերը՝ խնդրի վերաբերյալ լուրջ մտահոգություններ հրապարակ բերելու եւ քննարկումներ կազմակերպելու առումով: Ասենք, որ դա շատ, շա՛տ զարմանալի կշտամբանք է: Շաբաթներ շարունակ բազմաթիվ կառույցներից՝ պետական թե հասարակական, բազմաթիվ մտավորականների շուրթերից հնչում են քննադատություններ ու կոչեր, հազար ու մի եղանակով փաստարկվում է հայոց դպրոցի ու լեզվի համար ձեռնարկի ամբողջ վտանգավորությունը, իսկ նախարարը բողոքում է խնդրի շուրջ լայն քննարկումներ չկազմակերպելուց: Նախարարի կշտամբանքներն առավել զարմանալի են նաեւ մեկ այլ առումով: Եթե իր ղեկավարած գերատեսչությունը եւ կառավարությունը շահագրգռված էին խնդրի հասարակական լայն քննարկմամբ, ուրեմն ինչո՞ւ էր խնդիրը նույն հասարակությունից ծածուկ պահվում: Ժամանակին ո՞ր պաշտոնաթերթում հրապարակվեց տխրահռչակ այդ նախագիծը՝ քննարկման հրավերն էլ հետը, որ հասարակությունը լուռ մնաց՝ «Կրթությո՞ւն», թե՞ «Հայաստանի Հանրապետություն». նախագիծն ինչո՞ւ չհայտնվեց գոնե համացանցի՝ նշված երկու կառույցների պաշտոնական կայքերում՝ այնպես, որ ցանկացողները կարողանային առանց հատուկ ջանքերի գտնել: Եվ քանի որ մեծ ճիգերով միայն փաստաթուղթը պեղվեց ինչ-որ անտրամաբանական տեղից, ուրեմն ինչպե՞ս էր հասարակությունն իրազեկվելու եւ նախարարին բավարարող քննարկումներ անցկացնելու:

ԿԳ նախարարը կշտամբելու հետ նաեւ հեգնում է, թե իրեն քննադատողների մեծ մասը «Լեզվի մասին» օրենքը մինչեւ վերջերս նույնիսկ չէր կարդացել ու ծանոթ չէր՝ ի տարբերություն... իրեն: Նախարարը, այո, թեեւ ակնհայտորեն ու անթաքույց պարտ է հայոց օրենսդրության եւ, մասնավորապես, լեզվի օրենքի խորհմացությամբ, բայց, ինչպես կտեսնենք ստորեւ, նա լավ չգիտի իր իսկ հեղինակած նախագիծը: Նախարարը չգիտի կարեւորը՝ օտարալեզու դպրոցները լինելու են պետակա՞ն, թե՞ մասնավոր:

Թեեւ նա պնդում է, որ դրանք լինելու են միայն մասնավոր, սակայն պարզվում է՝ «լրամշակված» տարբերակում բառային անփարատ մշուշ է, կատարյալ անորոշություն: «Անգամ լրամշակված տարբերակում չենք գրում, որ դրանք մասնավոր են լինելու,- ասում է նախարարը եւ մեկնաբանում.- ամեն ինչ օրենքում չենք կարող նշել»:

Դե իհարկե: Օրենքում որեւէ սահմանափակման մասին չի նշվելու, բայց օրենքը վերաբերելու է միայն մասնավոր դպրոցին. սքանչելի տրամաբանություն է: Նախարարին գուցե հիշեցնենք նույնքան սքանչելի այն ճշմարտությունը, թե՝ ինչ արգելված չէ օրենքով, ուրեմն օրինական է: Իսկ օրենքում «ամեն ինչ չնշելու» այս պարզունակ հնարքը ակնհայտ սողանցք է օրենքի ապագա շահախնդիր ընթերցողի (օրինակ՝ կառավարության) համար, որը հարկ եղած դեպքում օրենքը «կկարդա» այնպես, որ օտարալեզու պետական դպրոց բացելու իր որոշման ճանապարհին որեւէ արգելք չի հայտնվի:

Սակայն ընդունենք, որ ամեն ինչ այնպես է, ինչպես նախարարն է ասում՝ օրենքով թույլատրվելու է օտարալեզու միայն մասնավոր դպրոցների գործունեությունը: Բայց ո՞վ է ասել, որ մասնավոր դպրոցները պետականներից պակաս վտանգավոր են, ինչո՞ւ է նախարարն անընդհատ շեշտում, թե խոսքը մասնավոր դպրոցների մասին է: Արդյո՞ք դրանով չի ուզում ասել, որ օտարալեզու դպրոցների մասնավոր լինելու հանգամանքով հայոց դպրոցին եւ հայոց լեզվին սպառնացող վտանգը չեզոքացվում կամ հասցվում է նվազագույնի: Կարծում ենք՝ հենց այդ է ուզում ասել, եւ այս տրամաբանությունը դարձյալ զարմացնում է: Նախարարն ինքն էլ լավ գիտի, որ մասնավոր ցանկացած կառույց՝ տնտեսական, մշակութային կամ կրթական, ռեսուրսների եւ արդյունավետության առումով միշտ էլ գերազանցում է համանման պետական կառույցներին. սա աքսիոմա է: Իսկ մեր պետական կրթական համակարգն այսօր այնքան թշվառ վիճակում է, որ նրա համար կործանարար կլինի հրապարակ բերել օտարալեզու մասնավոր կրթության պես հզոր մի ախոյանի՝ ուսուցման նորագույն միջոցներով ու պայմաններով: Որպեսզի այս փաստարկը չդիտվի իբրեւ հոռետեսական կանխագուշակում, նախարարին հիշեցնենք հանրակրթության համակարգում կրկնուսույցի՝ առ այսօր անհաղթահարելի ինստիտուտի մասին, որ վաղուց լայն ասպարեզ է նվաճել եւ ներառում է հազարավոր մասնագետ մանկավարժների ու տասնյակ հազարավոր աշակերտ-դիմորդների: Հիշեցնելով նաեւ փաստենք, որ մեր բուհական համակարգն այսօր քիչ թե շատ պատշաճ գիտելիք ունեցող դիմորդով համալրվում է հենց ա՛յս ինստիտուտի շնորհիվ: Եվ եթե պետական հանրակրթությունը, երկատվելով իր ներսում, արդյունավետության առումով պարտվում է թույլ հնարավորություններով ներքին մասնավոր հակառակորդին, ուրեմն որքա՛ն անզոր է լինելու նա գերհզոր միջոցներով օտա՛ր մասնավորի առջեւ:

Այսպիսով՝ կրթության նախարարը օտարալեզու դպրոցների մասնավոր լինելու հանգամանքը թեեւ իբրեւ ավետիս է հնչեցնում, բայց խորքում դա ավելի մեծ վտանգի մասին է գուժում, քան պետականը:

Այնուամենայնիվ, փորձենք եւս մեկ անգամ հասկանալ օտարալեզու դպրոցների մասնավոր լինելու պարագան՝ դա լա՞վ է, թե՞ վատ:

Օտարալեզու դպրոցները քանի որ պետական չեն լինելու (ըստ նախագծի նախարարական «ընթերցման»), հետեւաբար պետության կողմից չեն վերահսկվելու՝ լայն առումով: Այդ դպրոցներն իրենք են որոշելու իրենց ներքին կարգն ու կանոնադրությունը: Բայց վերջիններիս սահմանումը վերապահելով օտարալեզու դպրոցներին՝ որեւէ երաշխիք չունենք, որ այդ կարգերը ոչ միայն չեն հակասելու մեր կրթամշակութային քաղաքականությանն ու կրթական ավանդույթներին, այլեւ չեն հանգեցնելու այլազան կամայականությունների, լեզվատյացության դրսեւորումների եւ այլն: Վերջինիս նախադեպը մեր հանրային հիշողության մեջ պահպանվում է դեռ ռուսական դպրոցների «ռենեսանսի« (նախարարի նախընտրած բառն է) ժամանակներից: Այդ հիշողությունը պիտի որ վառ լինի նաեւ նախարարի հիշողության մեջ. ինքն այդ «ռենեսանսի» ներկայացուցիչներից է:

Նախագծի լրամշակմամբ ձեռք բերված մյուս «նվաճումը» վերաբերում է դպրոցներում օտարալեզու ուսուցումը միջին դասարաններից սկսելուն: Եվ թեեւ «լրամշակված» տարբերակի այս հատվածը նախագծի սկզբնական տարբերակի համեմատությամբ ներկայացվում է որպես կարեւոր զիջում, այստեղ, սակայն, առկա է ներքին մի հակասություն, որ ավելի շատ խաբեության է նման: Դատենք ինքներդ: Եթե խնդրո առարկա դպրոցներում օտար լեզվով ուսուցումը սկսվելու է միջին դասարաններից, երբ երեխայի լեզվամտածողությունը մայրենիի հիմքի վրա արդեն ձեւավորվել է, ապա որքա՞ն է արդյունավետ այդ երեխային, ասենք, մաթեմատիկա սովորեցնել օտար լեզվով: Անհեթեթություն չէ՞, որ հայերեն մտածող երեխան առավել դյուրությամբ ու խորությամբ մաթեմատիկա է յուրացնում... անգլերենով: Իբր սա շատ մի հավատալու բան է, դեռ երեխայի ծնողին ու մեզ էլ համոզում են, թե դա ուսուցման ամենաարդյունավետ ճանապարհն է: Ո՞ւմ է պետք այսօրինակ մանկավարժությունը: Կարծում ենք՝ պետք չէ նաեւ նախաձեռնության հեղինակներին: Իսկ ճշմարտությունն այն է, որ օտարալեզու դպրոցներ բացելու նպատակը եւ այս նոր կրթական քաղաքականությունից ակնկալվող արդյունքը հենց օտար մտածողությամբ սերունդ ձեւավորելն է, որի դեպքում միայն, ինչպես երազում են նախաձեռնության հեղինակները, հնարավոր կլինի իրականացնել միջազգային չափանիշներով հանրակրթություն: Ուրեմն առնվազն կասկածելի են հայ երեխայի լեզվամտածողության հայեցիության պահպանման նախարարական հոգածությունները:

Օրենքի նախագծի լրամշակված տարբերակում նշված է օտարալեզու դպրոցների որոշակի թիվ՝ 15: Սա քի՞չ է, թե՞ շատ: Եթե Վրաստանում, ինչպես ի մխիթարություն բոլորիս վկայակոչում է նախարարը, իսկապես «կա այդպիսի 20 դպրոց», Հայաստանի համար գուցե շատ չէ: Բայց մեր նախարարն աններելի կերպով մոռանում է վրացու շովինիզմն ու օտարամերժությունը, որի դեպքում 20-ը ամենեւին վտանգավոր թիվ չէ, իսկ ահա մեր՝ հայերիս բացառիկ այլասիրության ու օտարամոլության համապատկերի վրա 15-ը... ողբերգական թիվ է: Ըստ նախարարի՝ օրենքով թույլատրելի 15 օտարալեզու դպրոցից 7 կամ 8-ը կբացվեն մարզերում: Համարյա համոզված ենք, որ օտարալեզու դպրոցների այսպիսի բաշխումը բացատրվում է ոչ թե մարզերի «իրավունքը» հարգելու կառավարության սիրալիր ուշադրությամբ, այլ այդ դպրոցների ցրվածությամբ պայմանավորված՝ վտանգի ամբողջ մեծության հանրային ընկալումը բաշխման համաչափությամբ տրոհելու ենթատեքստային ցանկությամբ:

Սակայն դրանով վտանգի հավանականությունը չի նվազում: Այնպիսի փոքր քաղաքում, ինչպիսին, օրինակ, Վանաձորն է, առնվազն մեկ այդպիսի դպրոց բացվելու դեպքում էլ լուրջ կրթական խնդիրներ կծագեն: Այդ դպրոցն իհարկե կլինի բոլոր առումներով գերժամանակակից եւ քաղաքում ամենահարգին, կդառնա իրենց զավակների ապագայով ապրող հարյուրավոր եւ հազարավոր ծնողների երազանքի եւ հույսի ամրոցը: Եվ հազարավոր հայ երեխաներ կհայտնվեն այնտեղ: Հետեւաբար, տասնյակ հայկական դպրոցներ կկանգնեն փակվելու կամ մանկավարժների թիվը նորից ու նորից կրճատելու վտանգի առջեւ:

Եթե կրթության նախարարը կարծում է, թե սա հոռետեսի կանխագուշակում է, ցավոք, սխալվում է:

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Լոռու մարզի Վանաձոր քաղաքի մտավորականների ԿՈՉԸ

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին**

**Վանաձոր քաղաքի մտավորականները խորապես մտահոգված ու տագնապած են կառավարության՝ «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության առիթով եւ կտրականապես դեմ են այդօրինակ ապազգային նախագծի հիման վրա օրենքները վերաձեւելուն, ինչի հետեւանքով Հայաստանի Հանրապետությունում կարող են օտարալեզու դպրոցներ բացվել: Ս.թ. հունիսի 7-ից ԱԺ քառօրյա նիստերում քննարկվելու է վերոհիշյալ նախագիծը:**

**Կոչ ենք անում Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին.**

**անկախ կուսակցական պատկանելությունից, անկախ խմբակցային շահերից եւ պարտադրանքներից՝ դեմ արտահայտվել այդ ազգադավ նախագծին: Լեզուն ավելին է, քան կարծում են այն մարդիկ, ովքեր կամա թե ակամա մայրենին կանգնեցնում են կործանման վտանգի առջեւ:Լեզուն միայն հաղորդակցության կամ գիտելիքի փոխանցման միջոց չէ. այն ինքնություն է եւ հայրենիք, աշխարհընկալման սեփական կերպ եւ ինքնաճանաչման հնարավորություն, ուստի ոչ որի տրված չէ ինչ-ինչ շահերից ու նպատակներից ելնելով վտանգել ժողովրդի լեզվական ինքնությունն ու ազգային պետականությունը:**

**5 հունիսի 2010 թ.**

**Վանաձոր**

Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան, Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ
Նինա Ա. Ջաղինյան, բան. գիտ. թեկնածու
Վանդոս Ղարագյոզյան, մանկ. գիտ. դոկտոր
Կորյուն Թորոսյան, տնտ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
Մանվել Միկոյան, Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ
Խորեն Գասպարյան, Հայաստանի գրողների եւ ժուռնալիստների միությունների անդամ, բանաստեղծ-թարգմանիչ
Դավիթ Գյուլզադյան, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Լեւոն Սարգսյան, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ,
Գեւորգ Մանուկյան, «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» հկ նախագահ, իրավաբան
Վալտեր Թորոսյան, Հայաստանի գրողների միության անդամ
Գագիկ Անտոնյան, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ, գրող
Բազմաթիվ այլ ստորագրություններ



# «Արամ Խաչատրյան» միջազգային մրցույթը՝ հունիսի 6-14-ը

**Արամ Խաչատրյանի անվան 8-րդ միջազգային մրցույթը (ջութակ, թավջութակ) հունիսի 6-ին ազդարարվեց բացված: Նշենք, որ աշխարհահռչակ կոմպոզիտորի անվան մրցույթը անցկացվում է 2003-ից՝ «Արամ Խաչատրյան-100» հիմնադրամի նախաձեռնությամբ, ՀՀ մշակույթի նախարարության եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հետ համատեղ: Մրցույթը անցկացվում է տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո եւ ԱՊՀ անդամ պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի աջակցությամբ: Մրցույթը, որը կընթանա հունիսի 6-14-ը տարբեր համերգասրահներում, բաղկացած է երեք փուլերից: Եզրափակիչ փուլից հետո, առաջին տեղի մրցանակակրին կհատկացվի 15 հազար ԱՄՆ դոլար, 2-րդին՝ 10 հազար, 3-րդին՝ 5 հազար: Բացի այդ, հաղթողը աննախադեպ հնարավորություն է ստանալու ելույթ ունենալ Մարիինսկի թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի եւ Մոսկվայի պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի հետ նույն բեմում: Մրցույթին մասնակցելու համար 59 հայտ է ներկայացվել 21 երկրներից, այդ թվում՝ Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Ավստրալիայից, ԱՄՆ-ից, ՌԴ-ից, ԱՊՀ երկրներից: Երկրորդ փուլ է անցնելու 16 մասնակից (8 ջութակ, 8 թավջութակ), իսկ 3-րդ փուլ՝ 8 մասնակից (4 ջութակահար, 4 թավջութակահար): Միջազգային մրցույթի հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահն է Ռիտա Սարգսյանը, խորհրդի նախագահը Արմեն Սմբատյանը, փոխնախագահը՝ Սերգեյ Սարաջյանը, անդամներ՝ աշխարհահռչակ երաժիշտներ, դիրիժորներ, կոմպոզիտորներ՝ Վալերի Գերգիեւ, Լյուսի Իշխանյան, Ջոնաթան Ֆրիման-Էթվուդ, Պավել Կոգան, Էդվարդ Միրզոյան, Իոն Միրկովիչ, Ելիժբիետա եւ Քշիշտոֆ Պենդերեցկիներ եւ ուրիշներ, որոնք երկու մասնագիտական ժյուրիների հետ կընտրեն մրցույթի լավագույններին:**

## «Ժամանակը կարճ է, իսկ անելիքները շատ», ասում էր Արամ Խաչատրյանը

**Արամ Խաչատրյանի արձանի շրջակայքը մարդաշատ էր: Փողային նվագախմբի հնչյունների ներքո համերգասրահ էին մտնում միջազգային մրցույթի մասնակիցները, պատվավոր հյուրերը, ժյուրիի անդամներն ու երաժշտասերները: Համերգասրահի մուտքից նրանց էին դիմավորում «Սպարտակ» բալետից զգեստավորված դերասանները՝ նույն բալետի երաժշտության հնչյունների ներքո: Մրցույթի տոնական համերգը սկսվեց Արամ Խաչատրյանի մասին պատմող տեսաֆիլմով, որտեղ մեծանուն կոմպոզիտորն իր փորձը սկսեց «Ժամանակը կարճ է, իսկ անելիքները շատ» խոսքերով:**

**Մրցույթի կազմկոմիտեի նախագահ, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը տոնական համերգից առաջ գնահատանքի ու երախտագիտության խոսքեր հնչեցրեց մեծ հայ, հանճարեղ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հասցեին ու շեշտեց. «Արամ Խաչատրյանն այն եզակի անձերից էր, որի մասին իրավամբ կարելի է ասել. այո, նա հանճարեղ է, այո, նա մեծություն է: Նա ծնունդ տվեց մի երեւույթի, որը կոչվեց խաչատրյանական երաժշտություն ու դարձավ հավերժ տոն ժողովրդի համար, լցված հայկական արմատներով ու հնչեղությամբ...»:**

**Քիչ անց, Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը, դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ, հնչեցրեց Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից կազմված մի հրաշալի ծրագիր: Իսկ երբ նվագախմբին միացավ աշխարհահռչակ ջութակահարուհի Սոյունգ Յուն (Կորեա) ու փայլուն կատարեց Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը, «Գայանե» բալետից «Սուսերով պարը» եւ այլն, ներկաները երկարատեւ ծափերով նրան կրկին բեմ հրավիրեցին ու պահանջեցին նորից նվագել:**

**Այդ համերգում իրենց բարձր կատարողական արվեստով փայլած երաժիշտները ներկաներին պարգեւեցին անջնջելի տպավորություններ: Իսկ Երեւանի տարբեր սրահներում դեռ մեկ շաբաթ երաժշտասերների հոգին կլցվի խաչատրյանական ստեղծագործություններով՝ միջազգային մրցույթի շրջանակներում: Հունիսի 14-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կկայանա մրցանակաբաշխությունն ու գալա-համերգը՝ ազդարարելով մրցույթի ավարտը:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հայ բռնցքամարտիկներից հինգը հաղթահարեցին առաջին արգելքները



Մոսկվայում մեկնարկել է բռնցքամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունը: Հայաստանի հավաքականի անդամները հանդես են գալիս քաշային 11 կարգերից 10-ում:

Հայ բռնցքամարտիկներից արդեն 2 մենամարտ է անցկացրել մինչեւ 81 կգ քաշային Արթուր Խաչատրյանը: Առաջին մենամարտում նա 7-2 հաշվով պարտության մատնեց ադրբեջանցի Ռամազան Մագոմեդովին, իսկ երկրորդում առավելության հասավ հույն Յոհաննես Միլիտոպուլոսի նկատմամբ (13-3):

Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեց օլիմպիական խաղերի բրոնզե մրցանակակիր Հրաչյա Ջավախյանը (64 կգ), որը պարտության մատնեց Ֆինլանդիան ներկայացնող Ալեքսանդր Վասիլեւին (11-2):

Հաջող էր նաեւ 2008-ի աշխարհի գավաթակիր, 2009-ի աշխարհի փոխչեմպիոն Անդրանիկ Հակոբյանի (75 կգ) մեկնարկը: Նա մեծ առավելությամբ հաղթեց Խորվաթիայի ներկայացուցիչ Սանին Պուլ Վրոչին (13-2): Դերենիկ Գիժլարյանն էլ կշարունակի պայքարը: Մինչեւ 51 կգ քաշային կարգում Դերենիկը 16-4 հաշվով հաղթեց Նորբերտ Կալուցային (Հունգարիա): 2008-ի Եվրոպայի փոխչեմպիոն Ցոլակ Անանիկյանն էլ (91 կգ) պարտության մատնեց լեհ Մաթեուս Մալույդային (4-0):

Ցավոք, ունեցանք նաեւ կորուստներ: Պայքարից դուրս մնացին Կարեն Ալյազյանն (54 կգ) ու Սամվել Մաթեւոսյանը (69 կգ): Կարենը զիջեց իռլանդացի Ջոն Նեւինին (2-13), իսկ Սամվելը պարտվեց Ֆրանսիան ներկայացնող Վասին Ալեքսիսին (0-18):

Բացի Հայաստանի հավաքականից, հայազգի բռնցքամարտիկներ են ընդգրկված նաեւ մի քանի այլ երկրների ընտրանիներում: Մասնավորապես ՌԴ հավաքականում 2 հայ է ընդգրկված՝ Դավիթ Հայրապետյանը (48 կգ) եւ Միշա Ալոյանը (51 կգ): Վերջինս ՌԴ հավաքականի անդամներից առաջինը ռինգ դուրս եկավ: Նրա մրցակիցը Ֆրանսիան ներկայացնող Նորդին Օուբալին էր՝ 2007-ի աշխարհի առաջնության բրոնզե մրցանակակիրը: 10-3 հաշվով հաղթեց Ալոյանը, որը 2008-ի աշխարհի գավաթակիրն է, 2009-ի աշխարհի առաջնության բրոնզե մրցանակակիրը: Նույն քաշային կարգում Ուկրաինան ներկայացնող Արտյոմ Դալլաքյանը պարտվեց իսպանացի Ֆրանսիսկո Տորիխոսին (3-10):

Իսկ Դավիթ Հայրապետյանն իր առաջին մենամարտը կանցկացնի ադրբեջանցի Էլվին Մամիշզադեի հետ հունիսի 9-ին: Այդ օրը ռինգ դուրս կգա նաեւ Հայաստանի պատվիրակ, 2008-ի Եվրոպայի չեմպիոն Հովհաննես Դանիելյանը: Նրա մրցակիցը կլինի ուկրաինացի Դենիս Շկարուբոն:

# «Փյունիկն» ու «Բանանցը» շարունակեցին հաղթարշավը



Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 10-րդ տուրում ուշադրության կենտրոնում «Բանանցի» եւ «Ուլիսի» մրցավեճն էր: Երկու թիմերն էլ 20 միավորով հետապնդում էին «Փյունիկին», ուստի այդ խաղում հաղթանակի գինը բավական բարձր էր: Կար եւս մեկ հետաքրքրական հանգամանք: «Ուլիսի» դարպասապահ Վլադիմիր Մալկովը 526 րոպե անընդմեջ գոլ բաց չէր թողել եւ «Բանանցի» հետ խաղում նրան ընդամենը 7 րոպե էր անհրաժեշտ «չոր» պահել դարպասը, որպեսզի գերազանցեր «Միկայի» դարպասապահ Սաուլյուս Կլեւինսկասի ռեկորդային ցուցանիշը:

Սակայն դա Մալկովին չհաջողվեց: Արդեն 5-րդ րոպեին ձախ թեւից Սամվել Մելքոնյանի փոխանցումից հետո Բետոն գլխի հարվածով խոցեց Մալկովի դարպասը: Մինչեւ ընդմիջում Էդուարդո դոս Սանթոսը կրկնապատկեց հաշիվը: «Բանանցը» զգալի առավելություն ուներ եւ կարող էր խոշոր հաշվով հաղթել, եթե իրացներ գոլային մյուս պահերը: Արարատ Առաքելյանի հարվածը դիպավ ձողին, իսկ Էդուարդո դոս Սանթոսի եւ Սամվել Մելքոնյանի հարվածներից հետո դրությունը փրկեց Մալկովը:

«Ուլիսի» խաղը ոչ մի տպավորություն չթողեց: Թեեւ 2-րդ խաղակեսում Սեւադա Արզումանյանը խաղադաշտ մտցրեց հարձակվողների, սակայն գոլային իրական սպառնալիքներ ստեղծել չհաջողվեց: Կարելի է հիշատակել միայն Ալեքսանդր Պետրոսյանի հարվածը, որը դիպավ ձողին: Իսկ «Բանանցը» կարող էր նոր հաջողության հասնել, սակայն Օրտեգան հեռու տարածությունից չկարողացավ գրավել դարպասը:

Երկրի չեմպիոն «Փյունիկը» հերթական հաղթանակը տոնեց՝ 3-0 հաշվով պարտության մատնելով «Իմպուլսին», որի հետ Դիլիջանում կայացած խաղում դարպասները մնացել էին անառիկ: Գոլերը խփեցին Արթուր Յուզբաշյանը, Էդգար Մալաքյանն ու Գեւորգ Ղազարյանը: 2-րդ խաղակեսում էլ «Փյունիկը» գոլային 3 իրական պահ չօգտագործեց, այլապես «Իմպուլսը» խոշոր կջախջախվեր: Նշենք, որ «Փյունիկը» մտադիր է իր կազմը համալրել նիգերիացի 3 ֆուտբոլիստներով, իսկ «Իմպուլսում» հանդես կգան բրազիլացի խաղացողներ, որոնք թիմի հետ արդեն մարզվում են:

Վերջին 4 հանդիպումներում «Միկային» ոչ մի կերպ չի հաջողվում հաղթանակ տոնել: Թվում էր, թե առաջնության հետնապահներից մեկի՝ «Կիլիկիայի» հետ մրցավեճում միկացիները ոչ մի խնդիր չեն ունենա: Արդեն 20-րդ րոպեին բրազիլացի Էդնեյը բացեց հաշիվը: Սակայն «Միկան» ոչ միայն չկարողացավ հաջողությունը զարգացնել, այլեւ խաղավարտից 5 րոպե առաջ գոլ բաց թողեց ու զրկվեց 2 միավորից: «Կիլիկիայի» 7 անընդմեջ պարտությունների շարքն ընդհատվեց Տիգրան Գրիգորյանի խփած գոլի շնորհիվ:

ՀՀ առաջնություններում «Շիրակին» դեռ չի հաջողվել հաղթել Կապանում: Ավանդույթը չխախտվեց նաեւ այս անգամ: «Գանձասարը» հաղթեց 1-0 հաշվով շնորհիվ թիմի ավագ Արմեն Տատինցյանի 11 մ հարվածի: Այս հաղթանակի շնորհիվ կապանցիները հեռացան վտանգավոր գոտուց:

Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 10 | 8 | 2 | 0 | 27-5 | 26 |
| 2. Բանանց | 10 | 7 | 2 | 1 | 23-11 | 23 |
| 3. Ուլիս | 10 | 6 | 2 | 2 | 13-5 | 20 |
| 4. Միկա | 10 | 5 | 2 | 3 | 13-9 | 17 |
| 5. Իմպուլս | 10 | 3 | 1 | 6 | 6-16 | 10 |
| 6. Գանձասար | 10 | 3 | 0 | 7 | 8-16 | 9 |
| 7. Կիլիկիա | 10 | 2 | 1 | 7 | 8-21 | 7 |
| 8. Շիրակ | 10 | 1 | 0 | 9 | 8-23 | 3 |

Ռմբարկուները

| | | |
|---|---|---|
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 8 |
| Էդուարդո դոս Սանթոս | «Բանանց» | 8 |
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 5 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 4 |
| Ալբերտ Թադեւոսյան | «Փյունիկ» | 4 |
| Արտեն Ավետիսյան | «Փյունիկ» | 4 |

ՇԱԽՄԱՏ

## Արոնյանը զիջեց Գելֆանդին

Լեւոն Արոնյանին չհաջողվեց հաղթող դառնալ իսպանական Լեոն քաղաքում անցկացված արագ շախմատի մրցաշարում, որին մասնակցում էին չորս շախմատիստներ: Մասնակիցները զույգեր էին կազմել եւ 4 պարտիայից բաղկացած մրցախաղում պետք է որոշեին եզրափակիչի ուղեգրերի տերերին:

Արոնյանը 2,5-1,5 հաշվով հաղթեց Լենիեր Դոմինգեսին: Առաջին երեք պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի, 4-րդում Արոնյանը հաղթեց սպիտակներով:

Եզրափակիչում Արոնյանի մրցակիցը Բորիս Գելֆանդն էր, որը 3,5-2,5 հաշվով պարտության էր մատնել Ֆրանսիսկո Վալյեխոյին: Գելֆանդի հետ առաջին երկու պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Արագ շախմատի հաջորդ երկու պարտիաներում մրցակիցները մեկական հաղթանակ տոնեցին: Նշանակվեց կայծակնային 2 պարտիա, որոնցում հաղթելով, Բորիս Գելֆանդը 4-2 հաշվով շահեց մրցախաղը:

## Միջին դիրքերում

Հնդկաստանի Մումբայ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարում Հայաստանը ներկայացնում են Գեւորգ Հարությունյանն ու Հրայր Սիմոնյանը: 7 տուրից հետո Հարությունյանը 5 միավորով 24-րդ տեղում է, իսկ Սիմոնյանը 70-րդ հորիզոնականն է զբաղեցնում 4,5 միավորով:

Հարությունյանը մրցաշարը սկսեց 4 անընդմեջ հաղթանակով՝ պարտության մատնելով հնդիկ շախմատիստներին: 5-րդ տուրում նա պարտվեց ռուսաստանցի Դմիտրի Կոկարեւին: Հաջորդ տուրում հայ շախմատիստը հաղթեց Տիրտոյին, այնուհետեւ հետեւեց պարտություն ռուսաստանցի Ալեքսեյ Դրեեւից: Սիմոնյանը տոնել է 3 հաղթանակ, նույնքան պարտիա ավարտել է ոչ-ոքի, կրել է մեկ պարտություն:

6,5 միավորով առաջատարը ռուսաստանցի Դմիտրի Կոկարեւն է: 6 շախմատիստ վաստակել է 6 միավոր:

## Ռաֆայել Նադալի չեմպիոնական 5-րդ տիտղոսը



Փարիզում ավարտվեց թենիսի «Մեծ սաղավարտ» մրցանակի ընթացիկ մրցաշրջանի երկրորդ մրցաշարը՝ «Ռոլան Գարոսը»: Տղամարդկանց մրցաշարում գլխավոր մրցանակը վիճարկեցին իսպանացի Ռաֆայել Նադալն ու շվեդ Ռոբին Սոդերլինգը: «Ռոլան Գարոսի» մրցաշարերում դա Նադալի 5-րդ եզրափակիչն էր եւ ինչպես նախորդներում, այս անգամ էլ իսպանացի թենիսիստը հաղթանակած թողեց կորտը: Երեք խաղափուլերում էլ նա հաստատեց իր առավելությունը (6-4, 6-2, 6-4):

Նախորդ եզրափակիչներում Նադալը 3 անգամ պարտության էր մատնել Ռոջեր Ֆեդերերին, մեկ անգամ՝ արգենտինացի Մարիանո Պուերտային: Փաստորեն, 2005-ից սկսած Նադալը միայն անցյալ տարի է «Ռոլան Գարոսի» հաղթողի դափնին զիջել Ռոջեր Ֆեդերերին: Ի դեպ, անցյալ տարի Նադալը մրցաշարից դուրս էր մնացել 1/8 եզրափակիչում՝ պարտվելով հենց Ռոբին Սոդերլինգին: Այնպես որ իսպանացի թենիսիստը յուրօրինակ ռեւանշ վերցրեց: Նշենք, որ միայն շվեդ թենիսիստ Բյորն Բորգին է հաջողվել Նադալից ավելի հաճախ՝ 6 անգամ հաղթել «Ռոլան Գարոսում»:

«Եթե այսօր լավագույն թենիսը չցուցադրեի, չէի հաղթի Ռոբինին: Շնորհակալ եմ հանդիսականներին, երկրպագուներիս եւ Իսպանիայի թագավորին աջակցության համար: Ֆրանսիայում ինձ զգում եմ ինչպես տանը», եզրափակիչից հետո հայտարարել է Նադալը:

Կանանց մրցապայքարում գլխավոր մրցանակը վիճարկեցին իտալուհի Ֆրանչեսկա Սկյավոնեն եւ ավստրալուհի Սամանտա Ստոսուրը, որոնց ոչ ոք չէր սպասում եզրափակիչում: Հաջողությունն ուղեկցեց Սկյավոնեին (6-4, 7-6), որն իր մարզական կարիերայում «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքի առաջին մրցաշարը շահեց: Նա դարձավ «Ռոլան Գարոսում» հաղթած առաջին իտալուհին:

«Հուսով եմ, որ ողջ Իտալիան դիտում էր այս հանդիպումը: Ես զգում էի նրա աջակցությունը: Շնորհակալ եմ նաեւ Ստոսուրին, որը շատ ուժեղ մրցակցուհի էր: Հնարավոր է, որ նրան հաջորդ անգամ հաջողվի այստեղ հաղթել: Բարեմաղթանքներս մորս եւ հորս, որոնք տանն են: Ինձ համար մեծ պատիվ է, որ մրցանակը հանձնեց Մարի Պիրսը, որին սիրում եմ», հայտարարել է Սկյավոնեն:

Կանանց զուգախաղում հաջողության հասան Ուիլյամս քույրերը, որոնք 6-2, 6-3 հաշվով պարտության մատնեցին Կվետա Պեշկե-Կատարինա Սրեբոտնիկ զույգին: Տղամարդկանց զուգախաղում Դանիել Նեստորն ու Նենադ Զիմոնիչը պարտության մատնեցին Լուկաշ Դլոուհի-Լեանդր Պաես երկյակին (7-5, 6-2):

## Բացման խաղը վստահվել է ուզբեկ մրցավարին

ՖԻՖԱ-ի մրցավարական կոմիտեն նշանակել է հունիսի 11-ին կայանալիք ՀԱՀ-Մեքսիկա բացման խաղի մրցավարին: Խաղը սպասարկելու պատվին է արժանացել ուզբեկ մրցավար Ռավշան Իրմատովը: Նա 2008, 2009-ին ճանաչվել է Ասիայի լավագույն մրցավար:

Միջազգային կարիերան նա սկսել է 2003-ից՝ սպասարկելով մինչեւ 17 տարեկանների աշխարհի առաջնության հանդիպումները: Իրմատովը վարել է նաեւ մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնության եւ 2008-ին Ճապոնիայում կայացած աշխարհի թիմային առաջնության հանդիպումները:

Բացման խաղում նրան կօգնեն իր հայրենակից Ռաֆայել Իլյասովը եւ Բահադիր Կոչկորովը Ղրղզստանից: 4-րդ մրցավարը կլինի մալայզացի Սուբհիդին Մոհդ Սալեհը:

## Լրացուցիչ տոմսեր են վաճառքի հանվել

ՖԻՖԱ-ն ֆուտբոլի աշխարհի առաջնության հանդիպումների լրացուցիչ տոմսեր է հանել վաճառքի: Դրանցից 38 հազարը նախատեսված են այն անձանց համար, որոնք նախընտրում են խաղերի ժամանակ խմիչք օգտագործել: Տոմսերի գինը 200-300 դոլար է, որն իր մեջ ներառում է խմիչքների արժեքը:

Վաճառքի է հանվել նաեւ 20 դոլար արժողությամբ 15 հազար տոմս, որոնց տերերը տրիբունայի այդ հատվածից այնքան էլ լավ չեն տեսնի ողջ խաղադաշտը: Այս երկու տեսակի տոմսերը վաճառվում են կանխիկ գումարով: Դրանք նախատեսված չեն եզրափակիչ, կիսաեզրափակիչ, բացման ու ՀԱՀ հավաքականի մասնակցությամբ հանդիպումների համար:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

